

ԹԱՐԱՄԻԶՈՑՆԵՐԻ և ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ  
ԱՊՈՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ  
ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐԻ  
ԿՈՆՎԵՆՑԻԱ  
1988  
ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐ

Աղուսակներ (Տես Վերահսկող Նյութերի Կարմիր Ցուցակը՝  
http://www.incb.org/e/index.htm)

ԹԱՐԱՄԻԶՈՑՆԵՐԻ և ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՊՈՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ  
ՄԻԱՑՅԱԼ ԱԶԳԵՐԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ

*Սույն Կոնվենցիայի Կողմերը,*

*Լրջորեն մտահոգված թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի արտադրության, պահանջարկի և շրջանառության մեծությամբ ու աճող միտուներով, որը լուրջ վտանի առջև է կանգնեցնում մարդկային առողջությունն ու բարեկեցությունը և հատադրձ ազդեցություն ունենում տնտեսության, հասարակության մշակութային ու քաղաքական հիմքերի վրա,*

*Լրջորեն մտահոգված նաև ապօրինի շրջանառությամբ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի տարբեր սոցիալական խմբերի մեջ կայուն աճող ներխուժմամբ և մասնավորապես այն փաստով, որ աշխարհի շատ մասերում երեխաներն օգտագործվում են թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի ապօրինի արտադրության, բաշխման և վաճառքի նպատակներով և որպես թմրամիջոցների շուկայի սպառողներ, որն իր հետևից անչափելի լրջության վտանգ է բերում,*

*Ընդունելով ապօրինի շրջանառության և այլ կազմակերպված հանցավոր գործունեությունների միջև կապը, որոնք վտանգում են օրինական տնտեսությունները և Պետությունների կայունությունը, անվտագությունը և ինքնիշխանությունը,*

*Ընդունելով նաև, որ ապօրինի շրջանառությունը միջազգահն քրեական գործունեություն է, որի ճնշումը պահանջում է անհապաղ ուշադրություն և բարձր առաջնահերթություն,*

*Տեղյալ լինելով, որ ապօրինի շրջանառությունը մեծ ֆինանսական շահույթներ և հարստություն է առաջացնում, որը հնարավորություն է տալիս միջաետական քրեական կազմակերպություններին մուտք գործել, փչացնել և կոռուպշիայի ենթարկել կառավարությունների, օրինական առևտրային և ֆինանսական գործարարության ու հասարակության բոլոր մակարդակների համակարգերը,*

*Հաստատակամությամբ լի, որպեսզի ապօրինի շրջանառության մեջ ընդգրկված անձինք գրկվեն իրենց քրեական գործունեությունների եկամուտներից և հենաբար վերացվի այսպիսի գործունեությամբ գբաղվելու հիմնական դրդապատճառը,*

*Ցանկանալով վերացնել թմրամիջոցների և հոգեմետ նյութերի չարաշահնան խնդիրներ առաջացնող պատճառների արմատները, ներառյալ այսպիսի թմրամիջոցների և նյութերի ապօրինի պահանջարկը և ապօրինի շրջանառությունից առաջացած շահույթը,*

*Հաշվի առնելով, որ միջոցառումներ են անհրաժեշտ որոշ նյութերի վերահսկման համար, ներառյալ քիմիական նյութերը և լուծիչները, որոնք օգտագործվում են թմրամիջոցների և հոգեմետ նյութերի արտադրությունում, որոնց մատչելիությունը*

հանգեցրել է այսպիսի թմրամիջոցների և նյութերի ընդհատակյա արտադրության մեծացման,

Հաստատակամությամբ լի, որպեսզի բարելավվի ծովով ապօրինի շրջանառության ձնշման միջազգային համագործակցությունը,

Ընդունելով, որ ապօրինի շրջանառության ոչնչացումը բոլոր Պետությունների միասնական պատասխանատվությունն է և որ այդ առումով անհրաժեշտ է միջազգային համագործակցության համակարգված գործունեություն,

Ընդունելով թմրամիջոցների և հոգեմետ նյութերի վերահսկման բնագավառում Միացյալ Ազգերի իրավասությունը ու ցանկանալով, որ այսպիսի վերահսկմանը զբաղվող միջազգային մարմինները պետք է այդ կազմակերպության շրջանակներում լինեն,

Վերահաստատելով թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ոլորտի գործող միջազգային համաձայնագրերի ուղղորդող սկզբնունքներն ու դրանց մեջ ներառված վերահսկման համակարգը,

Ընդունելով 1961թ. Թմրանյութերի Եզակի Կոնվենցիայով, 1972թ. Արձանագրությունամբ Փոփոխված 1961թ. Թմրանյութերի Եզակի Կոնվենցիայով և 1971թ. Հոգեմետ Նյութերի Կոնվենցիայով սահմանված միջոցառումների ուժեղացման և լրացման անհրաժեշտությունը, որպեսզի հակազդվեն ապօրինի շրջանառության և դրա լրջագույն հետևանքների մեծությունն ու չափը,

Ընդունելով նաև ապօրինի շրջանառության միջազգային քրեական գործունեությունների ձնշմանն ուղղված միջազգային արդյունավետ քրեա-իրավագիտական համագործակցության հզորացման և ուժեղացման կարևորությունը,

Ցանկանալով կնքել մի համապարփակ, արդյունավետ և գործուն միջազգային կոնվենցիա, որը հատկապես ուղղված է ապօրինի շրջանառության դեմ և որը հաշվի է առնում խնդրի տարբեր բնագավառներն ընդհանուր առմանը և մասնավորապես այն բնագավառները, որոնք ընդգրկված չեն թմրամիջոցների և հոգեմետ նյութերի բնագավառի գործող համաձայնագրերում,

Համաձայնվում են՝

## Հոդված 1 ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Բացառությամբ այն դեպքերի, երբ այլ կերպ է արտահայտված կամ որտեղ ենթատեքստով այլ բան է պահանջվում, ամբողջ Կոնվենցիայի մեջ պետք է կիրառվեն հետևյալ սահմանումները՝

ա) «Տնօրենների Խորհուրդ» - 1961թ. Թմրանյութերի Եզակի Կոնվենցիայով և 1972թ. Արձանագրությամբ փոփոխված 1961թ. Թմրանյութերի Եզակի Կոնվենցիայով ստեղծված Թմրանյութերի Վերահսկման Միջազգային Տնօրենների Խորհուրդ:

բ) «Կանաբիսի բույս» - կանաբիս տեսակի ցանկացած բույս:

շ) «Կոկայի թուփ» - էրիթրօքսիլոն տեսակի ցանկացած բույս:

դ) «Առևտրային փոխադրող» - ցանկացած անձ կամ ցանկացած պետական, մասնավոր կամ այլ մարմին, որը զբաղվում է ուղևորավճարով, վարձակալությամբ կամ այլ օգուտով մարդկանց, ապրանքների և փոստի փոխադրումով:

ե) «Հանձնաժողով» -Միացյալ Ազգերի Տնտեսական և Սոցիալական Խորհրդի Թմրանյութերի Հանձնաժողով:

- ի) «Բռնագրավում», որն ըստ նշանակության ներառում է նաև իրավունքից գրկելը, նշանակում է դատարանի կամ այլ համապատասխան մարմնի հրամանով սեփականությունից մշտական գրում:
- ց) «Ստուգված առաքում» - այն տեխնիկան, որը հնարավորություն է տալիս սույն Կոնվենցիայի Աղուսյակ I և Աղուսյակ II թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և նյութերի կամ դրանցով փոխարնիված նյութերի ապօրինի և կասկածյալ առաքումները մեկ կամ ավել երկրների տարածքով անցնելու կամ տարածք մտնելուց կատարվեն համապատասխան մարմինների իրազեկմանը և նրանց վերահսկման ներք՝ նպատակ ունենալով բացահայտել Կոնվենցիայի Հոդված 3 պարբերություն 1 սահմանված օրինախախտումներում ներգրավված անձանց,
- հ) «1961թ. Կոնվենցիա» - 1961թ. Թմրանյութերի Եզակի Կոնվենցիան:
- ի) «1961թ. փոփոխված Կոնվենցիա» - 1972թ. Արձանագրությամբ փոփոխված 1961թ. Թմրանյութերի Եզակի Կոնվենցիա:
- յ) «1971թ. Կոնվենցիա» - 1971թ. Հոգեմետ Նյութերի Կոնվենցիա:
- կ) «Խորհուրդ» - Միացյալ Ազգերի Տնտեսական և Սոցիալական Խորհրուրդ:
- լ) «Սառեցում» կամ «Կալանքի տակ դնել» - սեփանակության փոխանցման, փոխակերպման, կարգի կամ շարժման ժամանակավոր արգելք կամ դատարանի կամ համապատասխան մարմնի կողմից տրված հրամանի հիման վրա սեփականության ժամանակավոր պահպանում կամ ստուգում:
- մ) «Ապօրինի շրջանառություն» - սույն Կոնվենցիայի Հոդված 3 պարբերություններ 1 և 2 սահմանված օրինախախտումները:
- ո) «Թմրանյութ» - 1961թ. Թմրանյութերի Եզակի Կոնվենցիայի և 1972թ. Արձանագրության փոփոխված Ցանկեր I և II մեջ ներառված ցանկացած նյութ՝ բնական կամ սինթետիկ:
- ո) «Օպիումի կակաչ» - *Papaver somniferum L* տեսակի բույսը:
- թ) «Եկամուտ» - Հոդված 3 պարբերություն 1 սահմանված ուղղակի կամ անուղղակի օրինախախտման միջոցով ձեռք բերված ցանկացած եկամուտ:
- զ) «Սեփականություն» - ցանկացած տեսակի նյութական կամ ոչ նյութական, շոշափելի կամ ոչ շոշափելի ակտիվներ և այսպիսի ակտվների իրավունքը կամ շահը հաստատող իրավական փաստաթղթեր կամ գործիքներ:
- ի) «Հոգեմետ նյութ» - 1971թ. Հոգեմետ Նյութերի Կոնվենցիայի Ցանկ I, II, III կամ IV մեջ նշված ցանկացած բնական կամ սինթետիկ նյութ:
- ս) «Գլխավոր Քարտուղար» - Միացյալ Ազգերի Գլխավոր Քարտուղար:
- տ) «Աղուսյակ I» կամ «Աղուսյակ II» - սույն Կոնվենցիային կցված նյութերի համապատասխանաբար համարակալված ցուցակներ՝ ժամանակ առ ժամանակ փոփովող համաձայն Հոդված 12:
- ս) «Տրանզիտ Պետություն» - Պետություն, որի տարածով շարժվում են «Աղուսյակ I» կամ «Աղուսյակ II» մեջ ներառված ապօրինի թմրանյութերը, հոգեմետ նյութերն ու նյութերը, Պետություն, որը ոչ արտադրման երկիրն է, ոչ էլ վերջնակետի երկիրը:

## Հոդված 2 ՍՈՒՅՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՇՐՋԱՆԱԿԸ

- Սույն Կոնվենցիայի նպատակն է խթանել Կողմերի միջև համագործակցությունը, որպեսզի վերջիններս ավելի արդյունավետ հասցեագրեն միջազգային չափերի հասած թմրանիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության տարբեր ոլորտները:

Սույն Կոնվենցիայով նախատեսված պարտավորություններն իրականացնելիս՝ Կողմերը պետք է անհրաժեշտ միջոցառումները ձեռնարկեն, ներառյալ իրենց համապատասխան ներքին օրենսրական համակարգերի հիմնարար դրույթներին համահունչ օրենսդրական և վարչական միջոցառումները:

2. Կողմերը պետք է սույն Կոնվենցիայով նախատեսված պարտավորություններն իրականացնեն Պետությունների ինքնիշխան հավասարության և տարածքային ամբողջականության և այլ Պետությունների ներքին հարցերին չմիջամտելու սկզբունքների հետ համահունչ ձևով:

3. Կողմը չպետք է այլ Կողմի տարածքում ձեռնարկի միայն այդ Կողմի իրավասությանը պատկանող գործողություններ, որոնց կատարմա բացառիկ իրավունքը պատկանում է տվյալ Կողմի համապատասխան մարմիններին:

### Հոդված 3 ՕՐԻՆԱԿԱԽՈՏՈՒՄՆԵՐ և ՊԱՏԻԺՆԵՐ

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի հետևյալ միջազգայնորեն կատարված օրինախախտումների պատճման այնպիսի միջոցառումներ, որոնք անհրաժեշտ կարող են լինել համաձյան ներքին օրենքի՝

- a) i) 1961թ. Կոնվենցիայի, 1971թ. փոփոխված 1961թ. Կոնվենցիայի դրույթներին հակասող թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մշակումը, արտադրությունը, արտադրումը, տիրապետումը, առաջարկում, վաճառքի առաջարկը, բաշխումը, գնումը, վաճառքը, ցանկացած պայմաններով առաքումը, սփռումը, սփռումը տրանզիտի, տրանսպորտի միջոցով, ներմուծումն ու արտահանումը:
- ii) 1961թ. Կոնվենցիայի և փոփոխված 1961թ. Կոնվենցիայի դրույթներին հակասող օպիումի կակաչի, կոկայի թփի կամ կանարիսի բույսի մշակումը՝ թմրամիջոցներ արտադրելու նպատակով:
- iii) Վերը նշված ենթապարբերություն i) նշված թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի տիրապետումն ու գնումը:
- iv) Աղուսյակ I կամ Աղուսյակ II նշված սարքավորումների, նյութերի կամ թմրամիջոցների արտադրությունը, փոխադրումը կամ բաշխումը՝ ինանալով, որ դրանք օգտագործվում են թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի մշակման, արտադրության կամ արտադրման համար:
- v) Վերը նշված ենթապարբերություններ i), ii), iii) կամ iv) սահմանված ցանկացած օրինախախտման կազմակերպում, կառավարում կամ ֆինանսավորում:
- b) i) Սեփականության փոխակերպումը կամ փոխադրումը, իմանալով, որ այս սեփականությունը առաջացել է համաձյան սույն պարբերության ենթապարբերություն ա) կամ այսպիսի օրինախախտման կամ օրինախախտումների մասնակցության գործողության միջոցով, նպատակ ունենալով թաքցնել կամ քողարկել սեփականության ծագումը կամ աջակցել այսպիսի օրինախախտում կամ օրինախախտումներ կատարող անձին իր գործողությունների իրավական հետևանքներից խուսափելու համար:

- ii) Սեփականության իրական բնույթի, աղբյուրի, գտնվելու վայրի, բախման, շարժի, իրավունքների թաքցնումը կամ քողարկումը՝ իմանալով, որ այս սեփականությունը առաջացել է համաձայն սույն պարբերության Ենթապարբերություն ա) կամ այսպիսի օրինախախտման կամ օրինախախտումների մասնակցության գործողության միջոցով:
- c) Իր սահմանադրական սկզբունքներին և իրավական համակարգի հիմնական հասկացողությունների Ենթակա՝
- i) Սեփականության ձեռքբերում, տիրապետում կամ օգտագործում, ստանալու ժամանակ իմանալով, որ այս սեփականությունը առաջացել է համաձայն սույն պարբերության Ենթապարբերություն ա) կամ այսպիսի օրինախախտման կամ օրինախախտումների մասնակցության գործողության միջոցով:
  - ii) Աղուսյակ I կամ Աղուսյակ II նշված սարքավորումների կամ նյութերի տիրապետումը՝ իմանալով, որ դրան օգտագործվում են կամ կօգտագործվեն ապօրինի մշակման կամ արդադրության համար:
  - iii) Ցանկացած միջոցներով հրապարակավ դրդել կամ ստիպել այլոց, որպեսզի կատարեն սույն Հոդվածով նախատեսված օրինախախտումներ կամ ապօրինի օգտագործեն թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր:
  - iv) Սույն Հոդվածով սահմանված ցանկացած օրինախախտման մեջ մասնակցություն, ընկերակցում կամ կատարելու դավադրություն, կատարման փորձեր կամ դրանց աջակցություն, խթանում և խորհրդատվություն:
2. Իր սահմանադրական սկզբունքներին և իրավական համակարգի հիմնական հասկացողությունների Ենթակա՝ յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի միջազգայնորեն կատարված օրինախախտումների պատժման այնպիսի միջոցառումներ, որոնք անհրաժեշտ կարող են լինել համաձյան ներքին օրենք՝ 1961թ. Կոնվեցիայի, 1971թ. փոփոխված 1961թ. Կոնվենցիայի դրույթներին հակասող սեփական օգտագործման թմրամիջոցների և հոգեմետ նյութերի տիրապետման, գնման կամ մշակման համար:
3. Սույն Հոդվածի պարբերություն 1 սահմանված օրինախախտման տարի համար պահանջվող գիտելիքը, մտադրությունը կամ նպատակը կարող է եզրակացվել փաստացի համգամանքներից:
4. a) Յուրաքանչյուր Կողմ պետք է սույն Հոդվածի պարբերություն 1 նախատեսված օրինախախտումների, կախված վերջիններիս բնույթից, համար սահմանի պատժամիջոցներ, ինչպիսիք են բանտարկությունը կամ ազատազրկման այլ միջոցներ, դրամական տուժեր և բռնագրավում:
- b) Սույն Հոդվածի պարբերություն 1 նախատեսված օրինախախտումների համար ի լրումն մեղադրանքի կամ պատժի Կողմերը կարող են սահմանել, որ օրինախախտը պետք է անցնի միջոցառումներ, ինչպիսիք են բուժումը, կրթությունը, ետքուժումը, վերականգնումն ու սոցիալական վերահստեղության:
- c) Նախորդ Ենթապարբերություններից անկախ, փոքր բնույթի դեպքերում՝ Կողմերը կարող են սահմանել, որպես մեղադրանքի կամ պատժի այլընտրանք, միջոցառումներ, ինչպիսիք են բուժումը, կրթությունը,

Ետքուժումը, վերականգնումն ու սոցիալական վերահնտեղրացիան, ինչպես նաև, եթե օրինախախտը թմրամոլ է՝ բուժում և ետքուժում:

d) Որպես մեղադրանքի կամ պատժի այլընտրանք՝ ի լրումն սույն Հոդվածի պարբերություն 2 նախատեսված մեղադրանքի կամ պատժի Կողմերը կարող են սահմանել օրինախախտի համար այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են բուժումը, կրթությունը, ետքուժումը, վերականգնումն ու սոցիալական վերահնտեղրացիան:

5. Կողմերը պետք է ապահովեն, որ դատարաններն ու համապատասխան իրավասու մարմինները կարողանան հաշվի առնել փաստացի հանգամանքները, որոնք սույն Հոդվածի պարբերություն 1 սահմանած օրինախախտումները առանձնահատուկ լուրջ են դարձնում, ինչպիսիք են՝

a) Կազմակերպված հանցավոր խմբավորման, որին անդամակցում է, կատարած օրինախախտման մեջ ներգրավվածություն:

b) Օրինախախտի ներգրավվածությունը այլ միջազգային կազմակերպված գործունեությունների մեջ:

c) Օրինախախտի ներգրավվածությունը հանձանք կազմող այլ գործունեությունների մեջ:

d) Օրինախախտի կողմից բռնության կամ գենգի գործածումը:

e) Այն փաստը, որ օրինախախտը պետական պաշտոնյա է և որ օրինախախտումը կապված է նրա պաշտոնական դիրքի հետ:

f) Անչափահասների խաբերառություն և գործածում:

g) Այն փաստը, որ օրինախախտումը կատարվել է պատժից կամ կրթական հաստատությունում կամ սոցիալական ծառայության շենքային պայմաններում կամ դրանց անմիջական հարեւանությամբ կամ այլ վայրերում, որտեղ դպրոցահասակ երեխաններն ու աշակերտները այցելում են կրթական, մարզական և սոցիալական գործունեությունների համար:

h) Նախկին դատվածությունը, մասնավորապես նման օրինախախտումների համար՝ այնքանով, որքանով թույլատրված է Կողմի ներքին օրենքով:

6. Կողմերը պետք է փորձեն ապահովել, որ ներքին օրենքով նախատեսված ցանկացած իրավական իշխանություն, որը օգտագործվում է սույն Հոդվածով նախատեսված օրինախախտումներ կատարած անձանց հետաքննման համար, կիրառվում է, որպեսզի առավելագույնին հասցնի այս օրինախախտումների առումով իրավապահ միջոցառումները և կանխարգելի այսպիսի հանցագործությունների կատարումը:

7. Կողմերը պետք է ապահովեն, որ իրենց դատարանները և համապատասխան այլ մարմինները միշտ մտքում ունենան սույն Հոդվածի պարբերություն I նախատեսված օրինախախտումների լուրջ բնույթը և սույն Հոդվածի պարբերություն 5 սահմանված հանգամանքները, եթե վերանայեն այսպիսի օրինախախտումների համար դատապարտվածների վաղ ազատումն ու պայմանական ազատումը:

8. Յուրաքանչյուր կողմ պետք է, ըստ պատշաճի, իր օրենսդրության մեջ սահմանի սույն Հոդվածի պարբերություն I նախատեսված օրինախախտումների վաղեմության երկար ժամկետ և ավելի երկար ժամկետ, եթե կասկածյալը խուսափել է արդարադատությունից:

9. Յուրաքանչյուր կողմ իր իրավական համակարգին համահունչ պետք է համապատասխան միջոցառումներ ձեռնարկի, որպեսզի սույն Հոդվածի պարբերություն I նախատեսված օրինախախտումների համար մեղադրված օրինախախտը, որը

գտնվել է Կողմի տարածում, ներկա գտնվի բոլոր անհրաժեշտ քրեական դատավարություններին:

10. Սույն Կոնվեցիայի շրջանակներում Կողմերի համագործակցության նպատակով, ներառյալ մասնավորապես Հոդվածներ 5, 6, 7 և 9 շրջանակներում համագործակցության, սույն Հոդվածով նախատեսված օրինախախտումները պետք է դիտարկվեն, որպես ֆինանսական կամ քաղաքական օրինախախտումներ կամ որպես քաղաքական ուղղվածությամբ՝ ոչ ի վեհական Կողմերի ներքին հիմնարար օրենքի և սահմանադրական սահմանականության:

11. Սույն Հոդվածում պարունակվող ոչ մի բան չպետք է ազդեցություն ունենա այն սկզբունքի վրա, որ օրինախախտումների նկարագրությունը, որին դա վերաբերում է և դրա իրավական պաշտպանության իրավունքը պատկանում է Կողմի ներքին օրենքին և որ այսպիսի օրինախախտումները պետք է հետաքննվեն և պատժվեն համաձայն այդ օրենքի:

#### *Հոդված 4* ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

##### 1. Յուրաքանչյուր Կողմ՝

a) Պետք է ձեռնարկի այնպիսի միջոցառումներ, որոնք անհրաժեշտ կարող են լինել Հոդված 3 պարբերություն 1 նախատեսված օրինախախտումների հանդեպ իր իրավասությունը սահմանելու համար, երբ՝

- i) Օրինախախտումը կատարվել է իր տարածքում,
- ii) Օրինախախտումը կատարվել է իր դրոշով նավի վրա կամ օդանավում, որը օրինախախտման կատարման պահին գրանցված է իր օրենքների շրջանակներում,

b) Կարող է ձեռնարկել նաև այնպիսի միջոցառումներ, որոնք անհրաժեշտ կարող են լինել Հոդված 3 պարբերություն 1 նախատեսված օրինախախտումների հանդեպ իր իրավասությունը սահմանելու համար, երբ՝

- i) Օրինախախտումը կատարվել է իր քաղաքացիներից մեկի կամ իր տարածքում մշտապես բնակվող անձի կողմից,
- ii) Օրինախախտումը կատարվել է այն նավի վրա, որի առումով այդ Կողմը համաձայն Հոդված 17 լիազորված է եղել համապատասխան միջոցառումներ ձեռնարկել՝ հաշվի առնելով, որ իրավասությունը պետք է իրականացվի միայն այդ Հոդվածի պարբերություններ 4 և 9 նախատեսված համաձայնագրերի և համաձայնությունների հիման վրա,
- iii) Օրինախախտում է համարվում Հոդված 3 պարբերություն 1 ենթապարբերություն c) iv) նախատեսվածներից մեկը և կատարվում է իր տարածքից դուրս և Հոդված 3 պարբերություն 1 նախատեսված իր տարածքում կատարված օրինախախտումները:

##### 2. Յուրաքանչյուր Կողմ՝

a) Պետք է ձեռնարկի այնպիսի միջոցառումներ, որոնք անհրաժեշտ կարող են լինել Հոդված 3 պարբերություն 1 նախատեսված օրինախախտումների հանդեպ իր իրավասությունը սահմանելու համար, երբ մեղադրվող օրինախախտը իր տարածում է և չի արտաքսում նրան այլ Կողմին՝ հետևյալի հիման վրա՝

- i) Այդ օրինախախտումը կատարվել է իր տարածքում կամ իր դրոշով նավի վրա կամ օդանավում, որը օրինախախտման կատարման պահին գրանցված է իր օրենքների շրջանակներում կամ
- ii) Այս օրինախախտումը կատարել է իր քաղաքացիներից մեկը:
- b) Կարող է ձեռնարկել նաև այնպիսի միջոցառումներ, որոնք անհրաժեշտ կարող են լինել Հոդված 3 պարբերություն 1 նախատեսված օրինախախտումների հանդեպ իր իրավասությունը սահմանելու համար, եթե մեղադրվող օրինախախտը իր տարածում է և չի արտաքսում նրան այլ Կողմին:
3. Սույն Կոնվենցիան չի բացառում սեփական ներքին օրենսդրության համաձայն Կողմի քրեական արդարադատության իրականացումը:

## Հոդված 5 ԲՌՆԱԳՐԱՎՈՒՄ

1. Յուրաքանչյուր Կողմ պետք է այնպիսի միջոցառումներ ձեռնարկի, որոնք կարող են անհրաժեշտ լինել հետևյալի առգրավման համար՝
- a) Հոդված 3 պարբերություն 1 նախատեսված օրինախախտումներից ստացված եկամուտներ կամ սեփականություն, որի արժեքը համապատասխանում է այսպիսի եկամուտներին:
- b) Թմրանյութեր կամ հոգեմետ նյութեր և սարքավորումներ կամ այլ միջոցներ, որոնք օգտագործվում են կամ նախատեսվում են օգտագործվել Հոդված 3 պարբերություն 1 նախատեսված օրինախախտումների համար:
2. Յուրաքանչյուր Կողմ պետք է այնպիսի միջոցառումներ ձեռնարկի, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր համապատասխան մարմինների կողմից եկամուտների, սեփականության, միջոցների և սույն Հոդվածի պարբերություն 1 նախատեսված այլ միջոցների բացահայտման, հետևման և սառեցման կամ առգրավման համար՝ վերջնական բռնագրավման նպատակով:
3. Սույն Հոդվածով նախատեսված միջոցառումներն իրականացնելու համար յուրաքանչյուր կողմ պետք է լիազորի իր դատարաններին և այլ համապատասխան մարմիններին, որպեսզի վերջիններս կարողանան մատչելի դարձնեն կամ առգրավեն բանկերը, ֆինանսական կամ առևտրային գրանցումները։ Բանկային գաղտնապահության հիման վրա Կողմ չպետք է իրաժարվի սույն պարբերության սահմանված կարգով գործելուց։
4. a) Հոդված 3 պարբերություն 1 նախատեսված օրինախախտումների հանդեպ իրավասություն ունեցող մեկ այլ Կողմի սույն Հոդվածից բխող հայցի հիման վրա Կողմը, որի տարածքում գտնվում են սույն Հոդվածի պարբերություն 1 նախատեսված եկամուտները, սեփականությունը, միջոցները կամ այլ բաներ, պետք է՝
- i) Բռնագրավման հրաման ստանալու նպատակով հայցը ներկայացննի իր համապատասխան մարմիններին և այսպիսի հրաման ստանալու դեպքում դա իրանանացնի կամ
- ii) Հայցը բավարարելու նպատակով հարցված Կողմը իր համապատասխան մարմիններին ներկայացնի Հոդվածի պարբերություն 1 նախատեսված հայցվոր Կողմի տրված

բռնագրավման իրամանը, որը վերաբերում է իր պարբերություն 1 նախատեսված իր տարածքում գտնվող Եկամուտները, սեփականությունը, միջոցները կամ այլ բաները:

b) Հոդված 3 պարբերություն 1 նախատեսված օրինախախտումների հանդեպ իրավասություն ունեցող մեկ այլ Կողմի սույն Հոդվածից բխող հայցի հիման վրա հարցված Կողմը պետք է միջոցներ ձեռնարկի համապատասան մարմինների կողմից Եկամուտների, սեփականության, միջոցների և սույն Հոդվածի պարբերություն 1 նախատեսված այլ միջոցների բացահայտման, հետևման և սահեցման կամ առգրավման համար՝ վերջնական բռնագրավման նպատակով, որի հրամանը պետք է տա կամ հայցվոր Կողմ կամ համաձայն սույն պարբերության Ենթապարբերություն ա) սահմանված հայցված Կողմի միջնորդությամբ:

c) Սույն պարբերության Ենթապարբերություններ ա) և b) նախատեսված գործողություններն ու որոշումները պետք է կայացնի հայցված Կողմը՝ համաձայն և Ենթակա իր ներքին օրենքների և դատավարական կանոնների կամ այլ երկկողմանի կամ միակողմանի համաձայնագրերի և համաձայնությունների դրությների, որոնք կարող են պարտադրող լինել հայցվոր Կողմի առումով:

d) Հոդված 7 պարբերություններ 6-ից 19 դրույթները կիրառելի են համապատասխան փոփոխություններով: Ի լրումն Հոդված 7 պարբերություն 10 նախատեսված տեղեկատվության՝ սույն Հոդվածով սահմանված հայցերը պետք է պարունակեն հետևյալը՝

i) Սույն պարբերության Ենթապարբերություն ա) i) պարագայում՝ բռնագրավելիք սեփականության նկարագրությունը և հայցվոր Կողմի ներկայացրած փաստերի հայտարարիքը, որը բավարար կլինի հայցված Կողմին ներքին օրենքով հրաման ստանալու համար:

ii) Սույն պարբերության Ենթապարբերություն ա) ii) պարագայում՝ հայցվոր Կողմի տրված բռնագրավման իրավական օրինակը, որի վրա է հիմնված հայցը, այն փաստերը և տեղեկատվությունը, որոնց առումով տրված է հրամանը:

iii) Սույն պարբերության Ենթապարբերություն բ) պարագայում՝ հայցվոր Կողմի ներկայացրած փաստերի հայտարարիքը և պահանջվող գործողությունների նկարագրիը:

e) Յուրաքանչյուր Կողմը պետք է Գլխավոր Քարտուղարին ներկայացնի իր օրենքների և կանոնակարգի տեքստը, որոնք ուժի մեջ են մտցնում սույն պարբերությունը և այս օրենքների և կանոնակարգերի տեքստը և համապատասխան փոփոխությունները:

f) Եթե Կողմը որոշում է Ենթապարբերություններ ա) և b) նախատեսված միջոցառումները ընդունել պայմանականորեն, հիմնավորելով համապատասխան միջազգային համաձայնագրի գոյությամբ, ապա այդ Կողմը կարող է դիտարկել սույն Կոնվենցիան, որպես անհրաժեշտ և բավարար միջազգային պայմանագրային հիմք:

g) Կողմերը պետք է փորձեն երկկողմանի և բազմակողմանի միջազգային համաձայնագրեր, համաձայնագրեր և համաձայնություններ կնքել, որպեսզի հղորացնեն սույն Հոդվածով նախատեսված միջազգային համագործակցության արդյունավետությունը:

5. a) Սույն Հոդվածի պարբերություն 4 պարբերություն 1 սահմանված Կողմի բոնագրաված Եկամուտները կամ սեփականությունը պետք է պահպեն համաձայն իր ներքին օրենքի և վարչական ընթացակարգի:
- b) Սույն Հոդվածով նախատեսված մեկ այլ Կողմի հայով գործելու ժամանակ Կողմը կարող է առանձնահատուկ ուշադրություն դարձնել կնքվող համաձայնագրերին հետևյալի առումով՝
- Այսպիսի Եկամուտների և սեփականության կամ այսպիսի Եկամուտների և սեփականության վաճառքից ստացված միջոցների արժեքը կամ դրա զգալի մասը պետք է տրամադրվի թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության և չարաշահման դեմ պայքարում մասմագիտացված միջկառավարական մարմիններին:
  - Պարբերաբար և գործ առ գործ իման վրա այլ Կողմերի հետ կիսվի այսպիսի Եկամուտներից կամ սեփականությունից կամ այսպիսի Եկամուտների և սեփականության վաճառքից ստացված միջոցները՝ համաձայն իր ներքին օրենքի և վարչական ընթացակարգի կամ սույն նպատակը ուժի մեջ մտցնելու համար կնքված երկկողմանի և բազմակողմանի համաձայնագրերի:
6. a) Եթե Եկամուտները փոխակերպվել կամ փոխանցվել են այլ սեփականության, ապա այսպիսի Եկամուտների փոխարեն սեփականությունը պետք է ենթարկվի սույն Հոդվածով սահմանված միջոցառումներին:
- b) Եթե Եկամուտները խառնվել են օրինական աղբյուրից ձեռք բերված սեփականության հետ, ապա այսպիսի սեփականությունը, առանց ի վնաս առգրավման կամ սառեցման հետ կապված իրավասությունների, պետք է բոնագրավման՝ խառնված Եկամուտների գնահատված արժեքի չափով:
- c) Հետևյալից ստացված Եկամուտը կամ այլ օգուտները՝
- Եկամուտներ՝ սույն Կոնվեցիայի հմաստով,
  - Սեփականության փոխակերպված կամ ձևափոխված Եկամուտները կամ
  - Սեփականությունը, որի Եկամուտները խառնվել են, նույնպես պետք է ենթարկվեն սույն Հոդվածով սահմանված միջոցառումներին՝ Եկամուտներին վերաբերող ձևով և չափով:
7. Յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի, որ կասկածյալ Եկամուտների կամ բոնագրավման Ենթական այլ սեփականության օրինական սկզբնաղբյուրի ապացույցի բեռք փոխվի այնքանով, որքանով այսպիսի գործողությունը հետևողական է իր ներքին օրենքի սկզբունքների և դատական և այլ ընթացակարգերի բնույթի հետ:
8. Սույն Հոդվածի դրույթները չպետք է մեկնաբանվեն, որպես երրորդ կողմի իրական իրավունքներին վնասող:
9. Սույն Հոդվածում պարունակվող ոչ մի բան չպետք է ազդի այն սկզբունքի վրա, որ դրան վերաբերող միջոցառումները պետք է սահմանվեն և իրականացվեն՝ համաձայն Կողմի ներքին օրենքի դրույթների և Ենթակա վերջիններիս:

- Սույն Հոդվածը պետք է կիրառվի Հոդված 3 պարբերություն 1 նախատեսված Կողմերի սահմանված օրինախախտումների հանդեպ:
- Սույն Հոդվածին վերաբերող յուրաշանչյուր օրինախախտում պետք է դիտարկվի, որպես Կողմերի միջև գործող ցանկացած արտաքսման համաձայնագրի դրույթներին համապատասխան արտաքսման օրինախախտում:
- Եթե Կողմը, որը արտաքսումը պայմանավորում է միջազգային համաձայնագրի գոյությամբ, արտաքսման հայց է ստանում մեկ այլ Կողմից, որի հետ արտաքսման համաձայնագրի չունի, ապա կարող է սույն Կոնվենցիան դիտարկել, որպես արտաքսման իրավական հիմք՝ սույն Հոդվածով նախատեսված ցանկացած օրինախախտման համար: Կողմերը, որոնք մանրամասն օրենսդրություն են պահանջում, որպեսզի սույն Կոնվենցիան օգտագործվի, որպես արտաքսման իրավական հիմք, պետք է մտածեն ըստ անհրաժեշտության այսպիսի օրենսդրության ընդունումը:
- Կողմերը որոնք արտաքսումը չեն պայմանավորում միջազգային համաձայնագրի գոյությամբ, պետք է, որպես արտաքսման ենթակա ճանաչեն սույն Հոդվածով նախատեսված օրինախախտումները:
- Արտաքսումը պետք է ենթարկվի հայցվոր Կողմի օրենքի պայմաններին կամ կիրառվելիք արտաքսման միջազգային համաձայնագրերին՝ ներառյալ այն հիմքերը, որոնց վրա հիմնված հայցված Կողմը կարող է մերժել արտաքսումը:
- Սույն Հոդվածի Համաձայն ստացված հայցերը վերանայելիս՝ հայցված Կողմը կարող է մերժել տվյալ հայցը բավարարելուց, եթե վերջինիս դատական կամ այլ համապատասխան մարմինները բավարար հիմքեր ունեն հավատալու, որ սույն հայցի բավարարումը կհանգեցնի ցանկացած անձի հետաքրննաման և պատժի՝ վերջինիս ռասսայական, կրոնական, ազգային կամ քաղաքական հայաքների պատականելության պատճառով կամ նշված պատճառներով հայցը կարող է վնաս պատճառել ցանկացած այլ անձի:
- Կողմերը պետք է ջանան արագացնել արտաքսման ընթացակարգերը և պարզեցնեն սույն Հոդվածով նախատեսված օրինախախտումներին վերաբերող ապացույցային պահանջները:
- Իր ներքին օրենքների և արտաքսման միջազգային համաձայնագրերին ենթակա, բավարպված լինելով, որ հանգամանքները այսպես են պահանջում և հրատապ են և հայցվոր Կողմի խնդրանքով հարցված Կողմը կարող է կալանքի տակ վերցնել արտաքսող և իր տարածում գտնվող անձին կամ համապատասխան միջոցառումներ ձեռնարկել, որպեսզի ապահովի վերջինիս ներկայությունը արտաքսման ընթացակարգերին:
- Առանց վնասելու ներքին օրենքով սահմանված քրեական իրավասության նորմերին՝ Կողմը, որի տարածքում է գտնվել կասկածյալ օրինախախտը պետք է՝
  - Հայցվոր Կողմի հետ այլ համաձայնության բացակայության պարագայում՝ հետաքրննության նպատակով ներկայացնի գործը իր համապատասխան մարմիններին, եթե Հոդված 4 պարբերություն 2 նախատեսված օրինախախտաման համար նրան չի արտաքսում՝ Հոդված 4 պարբերություն 2 ենթապարբերություն ա) հիման վրա:
  - Հայցվոր Կողմի հետ իր իրավասությունը պահպանելու նպատակով այլ համաձայնության բացակայության պարագայում՝ հետաքրննության նպատակով ներկայացնի գործը իր համապատասխան մարմիններին, եթե Հոդված 4 պարբերություն 2 ենթապարբերություն 2) նախատեսված

օրինախախտանան համար նրան չի արտաքսում և սահմանել է իր իրավասությունը վերը նշված դրույթին համաձայն:

10. Եթե պատժամիջոցը ուժի մեջ դնելու նպատակներով արտաքսումը մերժվել է, քանի որ տվյալ անձը հայցված Կողմի քաղաքացի է, ապա հայցված Կողմը, եթե իր օրենսդրությունը թույլ է տալիս և համապատասխան այսպիսի օրենքի դրույթներին, հայցվոր Կողմի դիմումի հիման վրա կարող է դիտարկել պատժի կիրառումը, որը կատարվել է հայցվոր Կողմի օրենքներին համաձայն կամ դրա տարբերությունը:
11. Կողմերը պետք է փորձեն երկկողմանի և բազմակողմանի համաձայնագրեր կնքել, որպեսզի իրականացնեն արտաքսումը կամ հզորացնեն դրա արդյունավետությունը:
12. Կողմերը կարող են դիտարկել հատուկ այդ նպատակով կամ ընդհանուր երկկողմանի կամ բազմակողմանի համաձայնագրերի կնքումը՝ սույն Հոդվածով նախատեսված օրինախախտումներ կատարած բանտարկման կամ ազատազրկման այլ տեսակների դատապարտված անձանց իրենց երկրի տեղափոխելու համար, որպեսզի վերջիններս կարողանան իրենց պատիժը այնտեղ ավարտել:

### *Հոդված 7* ՓՈԽԱԴԱՐՁ ԻՐԱՎԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Սույն Հոդվածով նախատեսված՝ Կողմերը պետք է մեկը մյուսին տրամադրեն Հոդված 3 պարբերություն 1 սահմանված քրեական օրինախախտումների հետ կապված հետաքննման, դատապարտման և դատական ընթացակարգերի փոխադարձ աջակցության լավագույն միջոցները:
- Սույն Հոդվածով նախատեսված փոխադարձ իրավական աջակցությունը կարող է հայցվել հետևյալ նպատակներից ցանկացածի համար՝
  - Անձանցից ապացույցների և ցուցմունքների վերցնում:
  - Դատական փաստաթղթերի ծառայությունների ուժի մեջ մտցնում:
  - Խուզարկություններ և կալանքի տակ դնում:
  - Արարկաների և տեղերի գննում:
  - Տեղեկատվության և ապացույցային իրերի տրամադրում:
  - Համապատասխան փաստաթղթերի և գրանցումների բնօրինակների և հաստատված պատճենների տրամադրում՝ ներառյալ բանկային, ֆինանսական, կորպորատիվ և բիզնես գրանցումներ:
  - Ապացույցային նպատակներով եկամուտների, սեփականության, միջոցների և այլնի բացահայտում և հետևում:
- Կողմերը պետք է մեկը մյուսին տրամադրեն փոխադարձ իրավական աջակցության ցանկացած այլ ձև՝ թույլատրված հայցված Կողմի ներքին օրենքով:
- Հայցում ստանալուց, իրենց ներքին օրենքներին և գործառույթներին համաձայն, Կողմերը պետք է աջակցեն և խրախուսեն այն անձանձ ներկայությունը, ներառյալ ազատազրկման մեջ գտնվողները, որոնք համաձայնվում են աջակցել հետաքննություններին կամ մասնակցել վարույթներին:
- Բանկային գաղտնիության հիման վրա Կողմը չպետք է մերժի սույն Հոդվածով նախատեսված փոխադարձ իրավական աջակցությունը:
- Սույն Հոդվածի դրույթները չպետք է ազդեցություն ունենան երկկողմանի կամ բազմակողմանի այլ համաձայնագրով նախատեսված պարտավորությունների վրա, որոնք ամբողջականորեն կամ մասնակիորեն սահմանում են փոխադարձ իրավական աջակցությունը քրեական հարցերում:

7. Սույն Հոդվածի պարբերություններ 8-ից 19 պետք է տարածվեն սույն Հոդվածով նախատեսված հայցումների նկատմամբ, եթե տվյալ Կողմերը կապված չեն փոխադարձ իրավական աջակցության համաձայնագրով: Եթե այս Կողմերը կապված են այսպիսի համաձայնագրով, ապա այդ համաձայնագրի համապատասխան դրույթները պետք է կիրառվեն, եթե Կողմերը չեն համաձայնվում ըստ անհրաժեշտության կիրառել սույն Հոդվածի պարբերություններ 8-ից 19:

8. Կողմերը պետք է նշանակեն մի մարմին կամ եթե անհրաժետ է, ապա մարմիններ, որոնք պետք է պատասխանատվություն և իրավասություն ունենան փոխադարձ իրավական աջակցություն իրականացնելու կամ դրանք իրականացնան համար համապատասխան մարմիններին փոխանցելու համար: Այս նպատակով նշանակված մարմնի կամ մարմինների մասին պետք է ծանուցեն Գլխավոր Քարտուղարին: Փոխադարձ իրավական աջակցության հայցերի փոխանցումն ու դրա հետ կապված ցանկացած հաղորդագրությունը պետք է իրականացվի Կողմերի միջև նշանակված մարմինների միջև: Սույն պահանջը չպետք է գործի ի վեհական այսպիսի հայցերի և հաղորդագրությունների դիվանագիտական եղանակներով փոխանցելու իրավունքի և արտակարգ հանգամանքներում, երբ Կողմերը համաձայնվում են՝ Միջազգային Քրեական Ոստիկանության Կազմակերպության միջոցով, եթե հնարավոր է:

9. Հայցերը պետք է կատարվեն գրավոր կերպով՝ հայցված Կողմի համար ընդունելի լեզվով: Յույաքանչյուր Կողմի համար ընդունելի լեզվի կամ լեզուների մասին պետք է ծանուցվի Գլխավոր Քարտուղարին: Արտակարգ հանգամանքներում և Կողմերի միջև համաձայնության պարագայում հայցերը կարող են կատարվել բանավոր կերպով, բայց հետագայում դրանք պետք է գրավոր հաստատվեն:

10. Փոխադարձ իրավական աջակցության հայցը պետք է պարունակի՝

- Հայցում կատարած մարմնի ինքնությունը:
- Հայցմանը վերաբերող հետաքրնության, քրեական հետապնդման կամ դատավարության առարկան և բնույթը և այսպիսի հետաքրնություն, քրեական հետապնդում կամ դատավարություն կատարող մարմնի ֆունկցիաները:
- Համապատասխան փաստերի ամփոփագիր, բացառությամբ դատական փաստաթթեի ծառայության նպատակով հայցերի առումով:
- Աջակցության նկարագրությունը և հայցվոր կողմի ցանկությամբ կատարվելիք ցանկացած ընթացակարգի մանրամասները:
- Հնարավորության պարագայում տվյալ անձի ինքնությունը, գտնվելու վայրը և քաղաքացիությունը:
- Հայցվող ապացույցի, տեղեկատվության կամ գործողության նպատակը:

11. Հայցված Կողմը կարող է լրացնել տեղեկություններ հայցել, երբ պարզվում է, որ դա անհրաժեշտ է իր ներքին օրենքին համաձայն կամ երբ դա կարող է աջակցել այսպիսի գործողության իրականացմանը:

12. Հայցը պետք է կատարվի համաձայն հայվող Կողմի ներքին օրենքի և հայցվող Կողմի ներքին օրենքին չհակասելու չափով և երբ հնարավոր է, ապա նաև հայցման մեջ սահմանված ընթացակարգերի համաձայն:

13. Հայցվոր Կողմը չպետք է փոխանցի կամ օգտագործի հայցվող Կողմի հետաքրնության, քրեական հետապնդման կամ դատավարության համար տրամադրված տեղեկատվություն կամ ապացույցները հայցի մեջ նշանակված նպատակներից բացի այլ նպատակների համար՝ առանց հայվող Կողմի նախնական համաձայնության:

14. Հայցվոր Կողմը կարող է պահանջել, որ հայցվող Կողմը գաղտնի պահի հայցի փաստը և էությունը, բացառությամբ, երբ դա անհրաժեշտ է հայցի իրականացման համար: Եթե հայվող Կողմը չի կարող բավարարել գաղտիության պահանջը, ապա այն պետք է դրա մասին տեղյակ պահի հայվոր Կողմից:

15. Փոխադարձ իրավական աջակցությունը կարող է մերժվել՝

a) Եթե հայցը չի կատարվել համաձայն սույ Հոդվածի դրույթների:

b) Եթե հայվող Կողմը համարում է, որ հայցի իրականացումը հնարավոր է, որ վնասի իր ինքնիշխանությանը, անվտանգությանը, հասարակական կարգին կամ այլ էական շահերին:

c) Եթե հայցվող Կողմի իշխանություններին իրենց ներքին օրենքով արգելված է իրականացնել նմանատիպ օրինախախտման հետ կապված հայցված գործողությունը, որն իր օրեսնդրությամբ պետք է ենթարկվի հետաքննության, քրեական հետապնդման կամ դատավարության:

d) Եթե դա հակասի հայցվող Կողմի իրավական համակարգին՝ կապված տրամադրվելիք հայցի փոխադարձ իրավական աջակցության հետ:

16. Փոխադարձ իրավական աջակցության յուրաքանչյուր մերժման համար պետք է պատճառներ տրամադրվեն:

17. Հայցվոր Կողմը կարող է մերժել փոխադարձ իրավական աջակցությունը, հիմնավորելով, որ այն միջամտում է արդեն ընթացող հետաքննությանը, քրեական հետապնդմանը կամ դատավարությանը: Այսպիսի դեպքերում հայցվող Կողմը պետք է խորհրդակցի հայցվող Կողմի հետ, որպեսզի որոշի, որ աջակցությունը դեռ կարող է տրամադրվել այն պայմաններով և ժամանակով, որը հայվոր Կողմը կարող է անհրաժեշտ համարել:

18. Հայցվոր Կողմի տարածում հետաքննության, քրեական հետապնդման կամ դատավարության աջակցելու նպատակով ցուցմունտ տալ ցանկացող վկան, փորձագետը կամ այլ անձը չպետք է այդ տարածում հետաքննվեն, քրեական հետապնդման կամ ազատազրկման այլ սահմանափակման ենթարկվեն՝ հայցվող Կողմի տրածքից մեկնելուց առաջ կատարված գործողությունների, բաց թողումների կամ մեղադրանքների առումով: Այսպիսի ապահովությունը դադարում է, եթե վկան, փորձագետը կամ այլ անձը իշխանությունների կողմից իր ներկայության այլևս ոչ անհրաժեշտության մասին պաշտոնապես տեղեկանալուց տասնինգ անընդմեջ օրերից հետո կամավոր մնում է տարածում կամ հեռանալով վերադարնում է իր ազատ կամքով:

19. Հայցի սովորական ծախսերը պետք է ծածկվեն հայվող Կողմի հաշվին, եթե Կողմերի միջև այլ համաձայնություն չկա: Եթե էական կամ արտակարգ բնույթի ծախսեր են պահանջվում հայցը իրականացնելու համար, ապա Կողմերը պետք է խորհրդակցեն միմյան հետ, որպեսզի որոշեն հայցի կատարման պայմանները և ժամանակը, ինչպես նաև ծախսերի կատարման եղանակը:

20. Կողմերը պետք է անհրաժեշտության պարագայում դիտարկեն երկկողմանի կամ բազմակողմանի համաձայնությունների կամ համաձայնագրերի կնքման հնարավորությունը, որը կծառայի կամ գործնական ազդեցություն կունենա սույն Հոդվածի դրույթների կատարման վրա:

Կողմերը պետք է դիտարկեն սույն Հոդվածի պարբերություն 1 նախատեսված օրինախախտումների քրեական հետապնդման վարույթները մեկը մյուսին փոխանցելու հնարավորությունը, այն դեպքում, երբ այսպիս փոխանցումը բխում է արդարադատության համապատասխան իրականացնան շահերից:

### Հոդված 9 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՅԼ ԶԱԵՐ

1. Կողմերը պետք է սերտորեն համագործակցեն միմյանց հետ, իրենց համապատասխան ներքին իրավական և վարչական համակարգերին համահունչ, որպեսզի Հոդված 3 պարբերություն 1 նախատեսված օրինախախտումները ճնշելու համար հզորացնեն օրինապահ գործողությունների արդյունավետությունը: Երկկողմանի և բազմակողմանի համաձայնագրերի հիման վրա նրանք մասնավորապես պետք է՝

ա) իրենց համապատասխան գորածալությունների և ծառայությունների միջև ստեղծեն և շահագործեն հաղորդակցման միջոցներ, որպեսզի ապահովեն Հոդված 3 պարբերություն 1 նախատեսված օրինախախտումների բոլոր բնագավառներին վերաբերող տեղեկատվության արագ և անվտանգ փոխանակումը, ներառյալ, եթե համապատասխան Կողմերը համարում են տեղին, այլ քերական գործունեությունների հետ կապերը,

բ) Հոդված 3 պարբերություն 1 նախատեսված միջազգային բնույթի օրինախախտումների վերաբերյալ հարցումներ կատարելուց համագործակցեն միմյանց հետ, որոնք վերաբերում են՝

ի) Հոդված 3 պարբերություն 1 նախատեսված օրինախախտումներ կատարելու մեջ կասկածվող անձի ինքնությանը, գտնվելու վայրին և գործունեություններին:

ii) Այսպիսի օրինախախտումներից առաջացած եկամուտների և սեփականության շարժին:

iii) Սույն Կոնվենցիայի Աղուսյակ I և Աղուսյակ II թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և նյութերի շարժմանը և այն միջոցներին, որոնք օգտագործվում են կամ մտադրվում են օգտագործվել այսպիս օրինախախտումներ կատարելու համար:

c) Համապատասխան դեպքերում և եթե դա չի հակասում ներքին օրենքին, միացյալ խմբեր ստեղծեն, որոնք հաշվի առնելով անձի և գործի անվտանգության պաշտպանությունը, պետք է իրականացնեն սույն պարբերության դրույթները: Այսպիսի խմբերում մասնակցող ցանկացած Կողմի պաշտոնյանները պետք է գործեն, որպես այն Կողմի լիազոր ներկայացուցիչներ, որի տարածքում է տեղի ունենում գործառույթը, բոլոր այս դեպքերում ներգրավված Կողմերը պետք է ապահովեն այն Կողմի ինքնիշխանությունը, որի տարածքում է կատրարվում գործառույթը:

d) Վերլուծական կամ հետաքննչական նպատակների համար անհրաժեշտ քանակության նյութեր տրամադրեն:

ե) Նպաստեն իրենց համապատասխան մարմինների և ծառայությունների միջև արդյունավետ համագործակցությանը և խթանեն աշխատակիցների և այլ փորձագետների փոխանակմանը՝ ներառյալ մշտական կապավորը:

2. Յուրաքանչյուր Կողմ, ըստ անհրաժեշտության, պետք է նախաձեռնի, մշակի և բարելավի կոնկրետ վերապատրաստման ծրագրեր իր իրավապահ մարմինների և այլ

աշխատակիցների համար, ներառյալ մաքսավորները, որոնք պատասխանատու են Հոդված 3 պարբերություն 1 նախատեսված օրինախախտումների ձնշման համար: Այսպիսի ծրագրերը մասնավորապես պետք է լինեն հետևյալի վերաբերյալ՝

- a) Հոդված 3 պարբերություն 1 նախատեսված օրինախախտումների ձնշման և բացահայտման համար օգտագործվող մեթոդները:
- b) Հոդված 3 պարբերություն 1 նախատեսված օրինախախտումներ կատարած կասկածյալների կողմի օգտագործվող եղանակները և ուղիները, մասնավորապես տրանզիտ Պետություններում և համապատասխան հակագող միջոցառումները:
- c) Աղուսյակ I և Աղուսյակ II թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և նյութերի արտահանման և ներմուծման մոնիթորինգը:
- d) Աղուսյակ I և Աղուսյակ II թմրամիջոցներից, հոգեմետ նյութերից և նյութերից ստացված եկամուտների և սեփականությունների շարժման մոնիթորինգը և բացահայումը և այն միջոցները որոնք օգտագործվում են կամ մտադրվում են օգտագործվել Հոդված 3 պարբերություն 1 նախատեսված օրինախախտումներ կատարելու համար:
- e) Այսպիսի եկամուտների, սեփականության և միջոցների թաքցման կամ քողարկման համար օգտագործվող մեթոդները:
- f) Ապացույցների հավաքում:
- g) Ազատ առևտի գոտիների և նավահանգիստների վերասիման միջոցները:
- h) Իրավապահության արդիական միջոցներ:

3. Կողմերը պետք է աջակցեն մինյանց սույն Հոդվածի պարբերություն 2 սահմանված բնագավառներում փորձի փոխանակման համար նախատեսված վերապատրաստման ծրագրերի և հետազոտությունների ծրագրերի իրականացման համար: Այս առումով, ըստ անհրաժեշտության, նրանք պետք է կազմակերպեն տարածաշրջանային և միջազգային սեմինարներ, որպեսզի խթանեն փոխադարձ մտահոգության առարկա խնդիրների քննարկումները և համագործակցությունը, ներառյալ հատուկ խնդիրները և տրանզիտային Պետությունների կարիքները:

### Հոդված 10

#### ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՐԿՐՈՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

1. Անմիջանակորեն կամ համապատասխան միջազգային կամ տարածաշրջանային կազմակերպությունների միջոցով Կողմերը պետք է համագործակցեն, որպեսզի հնարավորինս աջակցեն և օժանդակեն տրանզիտ Պետություններին և մասնավորապես զարգացող երկրներին, որոնք այսպիսի աջակցության և օժանդակության կարիք ունեն՝ արգելման տեխնիկական համագործակցության և համապատասխան այլ գործունեությունների միջոցով:
2. Անմիջանակորեն կամ համապատասխան միջազգային կամ տարածաշրջանային կազմակերպությունների միջոցով Կողմերը կարող են ձեռնարկել այսպիսի տրանզիտ Պետություններին ֆինանսական աջակցություն տրամադրելու հարցը՝ նպատակ ունենալով ուժեղացնել և հզորացնել ապօրինի շրջանառության արդյունավետ վերահկուման և կանխարգելման համար պահանջվող ենթակառուցվածքի համար:

3. Սույն Հոդվածին համաձայն Կողմերը կարող են երկողմանի կամ բազմակողմանի համաձայնագրեր կամ համաձայնություններ կնքել և այս առումով կարող են հաշվի առնել ֆինանսական միջոցառումները:

### Հոդված 11 ՍՏՈՒԳՎՈՂ ԱՌԱՋՈՒՄՆԵՐ

1. Եթե համապատասխան ներքին իրավական համակարգերի հիմանան սկզբունքները թույլատրում են, ապա Կողմերը իրենց հնարավորությունների շրջանակներում պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցառումները, որպեսզի թույլ տան միջազգային մակարդակով ստուգվող առաքումների համապատասխան օգտագործումը՝ փոխադարձ համաձայնագրերի և համաձայնությունների հիման վրա և Հոդված 3 պարբերություն 1 նախատեսված օրինախախորումներ կատարած անձանց բացահայտման և ընդեմ վերջիններիս իրավական գործողություններ ձեռնարկելու համար:

2. Ստուգված առաքումներ օգտագործելու մասին որոշումները պետք է կայացվեն դեպք առ դեպք հիման վրա և անհրաժեշտության պարագայում հաշվի առնեն տվյալ Կողմի իրավասության իրականացման առումով ֆինանսական միջոցառումներն ու ըմբռնումները:

3. Ապօրինի առաքումները, որոնց ստուգված առաքումները համաձայնեցված են, համապատասխան Կողմերի համաձայնությամբ կարող են առգրավվել և թույլատրվել շարունակել՝ առանց թմրամիջոցներին կամ հոգեմետ նյութերին ձեռք տալու կամ դրանք փոխարինելու:

### Հոդված 12 ԹՄՐԱՆՑՈՒԹԵՐԻ ԿԱՄ ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՊՈՐԻՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՃԱԽԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԸ

1. Կողմերը պետք է ձեռնարկեն այն միջոցառումները, որոնք տեղին են համարում, որպեսզի կանխարգելեն թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի արգադրության նպատակով օգտոգործվող Աղուսյակ I և Աղուսյակ II նյութերի սփռումը և պետք է այս առումով համագործակցեն միմյանց հետ:

2. Եթե Կողմը կամ Տնօրենների խորհուրդը տեղեկություններ ունի, որն ըստ նրա կարող է պահանջել նյութի ընդգրկումը Աղուսյակ I և Աղուսյակ II մեջ, ապա պետք է տեղեկացնի դրա մասին Գլխավոր Քարտուղարին և տրամադրի նրան այդ ծանուցումը հիմնավորող տեղեկություններ: Սույն Հոդվածի պարբերություններ 2-ից 7 նկարագրված ընթացակարգը պետք է կիրառվի նաև այն դեպքում, եթե Կողմը կամ Տնօրենների խորհուրդը Աղուսյակ I և Աղուսյակ II մեջից նյութի հանումը կամ մեկ Աղուսյակից մյուսը տեղափոխման հիմնավորող տեղեկատվություն ունի:

3. Գլխավոր Քարտուղարը պետք է Կողմերին, Հանձնաժողովին և Կողմի արված ծանուցման պարագայում նաև Տնօրենների խորհրդին փոխանցի այս ծանուցումը և այլ տեղեկատվությունը, որն ըստ նրա վերաբերում է գործին: Կողմերը պետք է իրենց մեկնարանությունները հաղորդեն Գլխավոր Քարտուղարին այն լրացուցիչ տեղեկատվության հետ մեկտեղ, որը կարող է Տնօրենների խորհրդին աջակցել գնահատում կատարելու համար և Հանձնաժողովին՝ որոշում կայացնելու:

4. Եթե Տնօրենների Խորհուրդը, հաշվի առնելով նյութի ապօրինի օգտագործման չափը, կարևորությունը և բազմազանությունը, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի նպատակներով և ապօրինի արտադրության մեջ այլընտրանքային նյութերի օգտագործման հնարավորությունն ու հեշտությունը, գնտում է՝

ա) Որ նյութը հաճախակի օգտագործվում է թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի արտադրության մեջ,

բ) Որ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի արտադրության ծավալն ու չափը համարյախն առողջության և սոցիալական լուրջ խնդիրներ են ստեղծում, որպեսզի պահանջեն միջազգային գործողություն,

ապա այն պետք է Հանձնաժողովին հաղորդի նյութի գնահատումը, ներառյալ Աղուսյակ I և Աղուսյակ II նյութի ավելացման հավանական ազդեցությունը օրինական և ապօրինի արտադրության վրա՝ մոնիթորինգի միջոցառումների առաջարկությունների հետ, որոնք տեղին կլինեն դրա գնահատականների լույսի ներքո:

5. Կողմերի և Տնօրենների Խորհրդի, որոնց գնահատականը գիտական առումով պետք է որոշիչ լինի, ներկայացրած մեկնաբանությունները և առաջարկությունները և այլ համապատասխան գործոնները հաշվի առնելով Հանձնաժողովը անդամների երկու երրորդ մեծամասնությամբ կարող է ներառել նյութը Աղուսյակ I և Աղուսյակ II մեջ:

6. Սույն Հոդվածի համաձայն Հանձնաժողովի կայացրած ցանկացած որոշում պետք է հաղորդվի Գլխավոր Քարտուղարի միջոցով բոլոր Պետություններին և այլոց, որոնք հանդիսանում են կամ կիանդիսանան սույն Կոնվենցիայի և Տնօրենների Խորհրդի Կողմեր: Այսպիսի որոշումը ամեն Կողմի առումով պետք է լիովին ուժի մեջ մտնի հաղորդումից հարյուր ութանասուն օր հետո:

7. ա) Սույն Հոդվածի համաձայն Հանձնաժողովի կայացրած որոշումները պետք է ենթարկվեն Խորհրդի վերանայման՝ ծանուցումից հարյուր ութանասուն օր հետո ցանկացած Կողմի կողմից ներկայացված հայցի հիման վրա: Վերանայման հայցը պետք է ուղարկվի Գլխավոր Քարտուղարին՝ հայցի վերանայման վրա հիմնված բոլոր համապատասխան տեղեկությունների հետ մեկտեղ:

բ) Գլխավոր Քարտուղարը պետք է հայցի և համապատասխան տեղեկությունների օրինակներն ուղարկի Տնօրենների Խորհրդին, Հանձնաժողովին և այլ Կողմերին՝ հրավիրելով նրանց առաջարկությունները իննսուն օրվա ընթացքում: Ստացված բոլոր մեկնաբանությունները պետք է ներկայացվեն Խորհրդի վերանայման:

ց) Խորհրդը կարող է հաստատել կամ մերժել Հանձնաժողովի որոշումը: Խորհրդի որոշման մասին ծանուցումը պետք է փոխանցվի բոլոր Պետություններին և այլոց, որոնք հանդիսանում են կամ կիանդիսանան սույն Կոնվենցիայի, Հանձնաժողովի և Տնօրենների Խորհրդի Կողմեր:

8. ա) Առանց վնասելու սույն Հոդվածի պարբերություն 1 պարունակվող դրույթների ընդհանրությունը և 1961թ. Կոնվենցիայի դրույթները, Կողմերը պետք է ձեռնարկեն այն միջոցառումները, որոնքն նրանք անհրաժեշտ են համարում ձեռնարկեն Աղուսյակ I և Աղուսյակ II նյութերի, որոնք կրվում են իր տարածքում, արտադրությունը և բաշխումը մոնիթորինգի ենթարկելու համար:

բ) Այս առումով Կողմերը կարող են՝

ի) Ստուգել այսպիսի նյութերի արտադրության և բաշխման մեջ ներգրավված բոլոր անձանց և ձեռնարկություններին:

- ii) Ստուգել լիցենզավորված ձեռնարկությունները և շենքային պայմանները, որտեղ այսպիսի արտադրություն կամ բաշխում կարող է տեղի ունենալ:
- iii) Պահանջել, որ լիցենզավորվածները վերը նշված գործառույթների համար թույլատվություն ստանան:
- iv) Կանխարգելել, որպեսզի այսպիսի արտադրողների և բաշխողների տրամադրության տակ գնտվող նյութերի կուտակումը չգերազանցի գործունեության նորմալ իրականացման համար պահանջվող քանակները:

9. Աղուսյակ I և Աղուսյակ II նյութերի առումով յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի հետևյալ միջոցառումները՝

- a) Ստեղծի և շահագործի Աղուսյակ I և Աղուսյակ II նյութերի միջազգային առևտուրի մոնիթորինգի մի համակարգ, որպեսզի հեշտացնի կասկածելի նյութերի բացահայտումը: Այսպիսի մոնիթորինգային համակարգերը պետք է կիրառվեն արտադրողների, արտահանողների, ներմուծողների, մեծածախ և մանրածախ առևտորով զբաղվողների հետ համագորածակցության ժամանակ, որոնք պետք է տեղեկացնեն համապատասխան մարմիններին կասկածելի հրամանների և գործարքների մասին:
- b) Ապահովի Աղուսյակ I և Աղուսյակ II ցանկացած նյութի առգրավումը, եթե բավարար հիմք կա, որ դա օգտագործվում է թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության համար:
- c) Հնարավորինս շուտ տվյալ Կողմերի համապատասխան մարմիններին և ծառայություններին ծանուցի, եթե հիմքեր կան հավատալու, որ Աղուսյակ I և Աղուսյակ II նյութերի ներմուծում, արտահանում կամ փոխանցումը նախատեսված է թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի ապօրինի արտադրության համար, ներառյալ վճարման ծևերի և այլ էական տարրերի մասին տեղեկատվությունը, որը հանգեցնում է այդ հավատանքին:
- d) Պահանջի, որ արտահանումներն ու ներմուծումները պատշաճորեն պիտակավորվեն և փաստաթղթավորվեն: Հաշիվ ֆակտուրաների, բեռների ուղեգրերի, մաքսային, տրանսպորտային և այլ առաքման փաստաթղթերի պես առևտրային փաստաթղթերը պետք է ներառն Աղուսյակ I և Աղուսյակ II սահմանված նյութերի անվանումները, որոնք արտահանվում կամ ներմուծվում են, արտահանվող կամ ներմուծվող նյութերի քանակները և արտահանողի, ներմուծողի և հնարավորության դեպքում նաև ստացողի անունն ու հասցեն:
- e) Ապահովի, որ սույն պարբերության ենթապարբերություն d) սահմանված փաստաթղթերը պահպեն առնվազն երկու տարի և պետք է տրամադրվեն համապատասխան մարմիններին՝ տեսչության համար:

10. a) Ի լրումն պարբերություն 9 դրույթների և շահագրգիռ կողմի Գլխավոր Քարտուղարին հայցի հիման վրա յուրաքանչյուր Կողմ, որի տարածքից պետք է արտահանվի Աղուսյակ I նյութերը, պետք է ապահովի, որ այսպիս առաքումից առաջ իր համապատասխան մարմինների կողմից ներմուծող երկրի համապատասխան մարմիններին պետք է տրամադրվի հետևյալ տեղեկությունները՝
- i) Ներմուծողի և արտահանողի և հնարավորության դեպքում նաև ստացողի անունն ու հասցեն:

- ii) Աղուսյակ I նյութի անվանումը:
  - iii) Արտահանվող նյութի քանակը:
  - iv) Մուտքի անկնկալվող կետը և առաքման ակնկալվող ամսաթիվը:
  - v) Ցանկացած այլ տեղեկատվությունը, որը փոխադարձաբար համաձայնեցվել է Կողմերի հետ:
- b) Կողը կարող է վերահսկման ավելի խիստ միջոցառումներ ձեռնարկել, քան սահմանված են սյուն պարբերությամբ, եթե ըստ նրա այս տեսակ միջոցառումները ցանկալի են կամ անհրաժեշտ:
11. Երբ Կողմը սույն Հոդվածի պարբերություններ 9 և 10 համաձայն այլ Կողմի տրամադրում է տեղեկատվություն, ապա այս տեսակ տեղեկատվություն տրամադրող Կողմը կարող է պահանջել, որ ստացող Կողմը այն պահի գաղտնի՝ ցանկացած առևտրային, գործարար, առևտրական կամ մասնագիտական գործընթացում:
  12. Յուրաքանչյուր Կողմի պետք է ամեն տարի Տնօրենների Խորհրդին տրամադրի տեղեկատվություն հետևյալի մասին, այն ձևով և տեսքով, որ սահմանված է դրա համար՝
    - a) Աղուսյակ I և Աղուսյակ II մեջ ընդգրկված առգրաված նյութերի քանակը և նրանց ծագումը նույնպես, երբ հայտնի է:
    - b) Աղուսյակ I և Աղուսյակ II մեջ չընդգրկված նյութը, որը բացահայտվել է, որպես թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի արտադրության մեջ օգտագործվող և որը Կողմը բավարար է համարում Տնօրենների Խորհրդի ուշադրության գրավման համար:
    - c) Շեղման և ապօրինի արտադրության մեթոդները:
  13. Տնօրենների Խորհրդը պետք է տարեկան հաշվետվություններ ներկայացնի Հանձնաժողովին սույն Հոդվածի իրականացման վերաբերյալ և Հանձնաժողովը պետք է պարբերաբար վերանայի Աղուսյակ I և Աղուսյակ II համապատասխանությունը և տեղինությունը:
  14. Սույն Հոդվածի դրույթները չպետք է տարածվեն դեղագործական պատրաստուկների, ոչ էլ Աղուսյակ I և Աղուսյակ II մեջ ընդգրկված նյութեր պարունակող այլ պատրաստուկների վրա, որոնք միավորվել են այն կերպ, որ այսպիսի նյութերը չեն կարող հեշտությամբ օգտագործվել կամ վերարտադրվել պատրաստի միջոցներով:

### *Հոդված 13*

#### *ՆՅՈՒԹԵՐԻ ՈՒ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ*

Կողմերը պետք է այնպիսի միջոցառումներ ձեռնարկեն, որն ըստ նրանց անհրաժեշտ է թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի արտադրության կամ արտադրման սարքավորումների և նյութերի առևտուրն ու շեղումը կանխարգելելու համար և պետք է համագործակցեն այս առումով:

*Հոդված 14*

*ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ԲՈՒՅՍԵՐԻ ԱՊՈՐԻՆԻ ՄՇԱԿՄԱՆ ՈՒ ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ և  
ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՊՈՐԻՆԻ ՊԱՀԱՆՁԱՐԿԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՈՒՂՈՎԱԾ  
ՄԻԶՈՑԱԿՈՒՄՆԵՐ*

1. Սույն Կոնվեցիային համաձայն Կողմերի ձեռնարկված ցանկացած միջոցառում չպետք է լինի պակաս խիստ, քան թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր պարունակող բույսերի ապօրին մշակման վերացման և 1961թ. Կոնվեցիայի, փոփոխված 1961թ. Կոնվեցիայի և 1971թ. Կոնվենցիայի դրույթների համաձայն թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի պահանջարկի վերացման վրա տարածվող դրույթները:
  2. Յուրաքանչյուր Կողմ պետք է համապատասխան միջոցառումներ ձեռնարկի, որպեսզի կանխարգելի թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր պարունակող բույսերի ապօրին մշակումն ու արմատախիր անի այդ բույսերը, ինչպիսիք են օպիումի կակաչը, կոկայի թուփը և կանարիսի բույսերը՝ իր տարածքում ապօրինաբար մշակված: Ընդունված միջոցառումները պետք է հարգեն հիմնարար մարդկային ազատությունները և պետք է համապատասխանաբար հաշվի նստեն ավանդական օրինական օգտագործումների հետ, երբ այսպիսի օգտագործման պատմական, ինչպես նաև միջավայրի պահպանման ապացույց կա:
  3. a) Կողմերը կարող են համագործակցել վերացման ջանքերի արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Այսպիսի համագործակցությունը, երբ տեղին է, ի շարք այլոց, կարող է ներառել ինտեգրացված գյուղական զարգացումը, որը կիանգեցնի ապօրինի մշակման տնտեսապես կենսունակ այլընտրանքներին: Շուկայի մուտքի, ռեսուրսների մատչելիության և գերակայող սոցիալ-տնտեսական պայմանները պետք է հաշվի առնեն նախքան այսպիսի գյուղական զարգացման ծրագրերի իրականացումը: Կողմերը կարող են համաձայնվել համագործակցության այլ համապատասխան միջոցառումների մասին:
  - b) Կողմերը պետք է խթանեն նաև գիտատեխնիկական տեղեկատվության փոխանակումն ու վերացմանը վերաբերող հետազոտության իրականացմանը:
  - c) Ընդհանուր սահմանների առկայության պարագայում Կողմերը պետք է փորձեն այդ սահմանների իրենց համապատասխան գոտիներում համագործակցել՝ վերացման ծրագրերի ուղղությամբ:
4. Կողմերը պետք է համապատասխան միջոցառումներ ձեռնարկեն, ուղղված թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության վերացմանը կամ նվազեցմանը՝ նպատակ ունենալով կրծատել մարդկային տանջանքներն ու վերացնեն ապօրինի շրջանառության ֆինանսական խթանները: Այս միջոցառումները ի շարք այլոց կարող են հիմնավորված լինել Միացյալ Ազգերի, Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության անդամ Միացյալ Ազգերի մասնագիտացված գործակալությունների և այլ համապատասխան միջազգային կազմակերպությունների առաջարկությունների և 1987թ. Թմրանյութերի Չարաշահման և Ապօրինի Շրջանառության Միջազգային Խորհրդակցության ընդունած Համապարփակ Բազմալորտային Նկարագրի վրա, քանզի այն պատկանում է կանխարգելման, բուժման և վերականգնման բնագավառում կառավարական և ոչ կառավարական և մասնավոր գործակալությունների ջանքերին: Կողմերը կարող են երկկողմանի և բազմակողմանի համաձայնագրեր և համաձայնություններ կնքել թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի պահանջարկը կրծատելու համար:
  5. Կողմերը կարող են անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել նաև Աղուսյակ I և Աղուսյակ II թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և նյութերի վաղ վերացման և օրինական պահպանման համար, որոնք առգրավվել կամ բռնագրավվել են և

ապացույցի համար անհրաժեշտ քանակները համապատասխան կերպով ձևակերպվել են:

### *Հոդված 15* ԱՌԵՎԱՏՐԱՅԻՆ ՓՈԽԱՊՐՈՂՆԵՐ (ԿՐՈՂՆԵՐ)

1. Կողմերը պետք է համապատասխան միջոցառումները ձեռնարկեն որպեսզի ապահովեն, որ առևտրային կրողների օգտագործված տրանսպորտային միջոցները չօգտագործվեն Հոդված 3 պարբերություն 1 նախատեսված օրինախախտումներ կատարելու համար: Այս տեսակ միջոցառումները կարող են ներառել առևտրային փոխադրողների հետ հատուկ համաձայնություններ:

2. Յուրաքանչյուր Կողմ պետք է պահանջի, որ առևտրային փոխադրողները համապատասխան զգուշության միջոցառումները ձեռնարկեն, որպեսզի կանխարգելեն իրենց տրանսպորտային միջոցների օգտագործումը Հոդված 3 պարբերություն 1 նախատեսված օրինախախտումներ կատարելու համար: Այս տեսակ զգուշությունները պետք է ներառեն՝

a) Եթե առևտրային փոխադրողի գործունեության հիմնական տեղը Կողմի տարածքում է՝

i) Կասկածելի անձանց կամ առաքումներ բացահայտելու համար աշխատակիցների վերապատրաստում:

ii) Աշխատակիցների անկեղծության խթանում:

b) Եթե առևտրային փոխադրողը գործում է Կողմի տարածքում՝

i) Բերնային ուղեգրերի նախօրոք հանձնում՝ եթե հնարավոր է:

ii) Զիհազորված միջամտությունից պաշտպանված, անհատական ճշգրտվող կնիքների օգտագործում:

iii) Ամենավաղ հնարավոր դեպքում համապատասխան մարմիններին զեկուցում բոլոր այն կասկածելի հանգամանքների մասին, որոնք կարող են կապված լինել Հոդված 3 պարբերություն 1 նախատեսված օրինախախտումներ կատարելու հետ:

3. Յուրաքնյուր Կողմ պետք է փորձի ապահովել առևտրային փոխադրողների և համապատասխան մամինների միջև համագործակցությունը մուտքի և ելքի և այլ մաքսային վերահսկողության կետերում՝ նպատակ ունենալով կանխել չթույլատրված մուտքը դեպի տրանսպորտային միջոցներն ու բեռները և իրականցնել համապատասխան անվտանգության միջոցառումները:

### *Հոդված 16*

#### ԱՌԵՎԱՏՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

1. Յուրաքնայուր Կողմ պահանջում է որպեսզի թմրադեղերի և հիգեմետ նյութերի օրինական արտահանումը պատշճորեն գրանցվի: Ի լրումն 1961թ. Կոնվենցիայի Հոդված 31 նախատեսված պահանջների, 1971թ. փոփոխված Կոնվենցիայի Հոդված 31, առևտրային փաստաթղթերը, ինչպիսիք են՝ հաշվի ֆակտուրաները, բեռների դեկարացիաները, մաքսային, տրանսպորտային և փոխադրման այլ փաստաթղթերը, պետք է ներառեն արտահանվող թմրադեղերի և հիգեմետ նյութերի անվանումները, ինչպես որ դրանք նշված են 1961. Կոնվենցիայի և 1971թ. փոփոխված Կոնվենցիայի

համապատասխան ցուցակներում, արտահանվող քանակը և արտահանողի, ներմուծողի և ըստ անհրաժեշտության նաև՝ բեռք ստացողի անունն ու հասցեն:

2. Ցուրաքնայշուր Կողմ պետք է ապահովի փոխադրվող թմրադեղերի և հոգեմտ նյութերի ճիշտ գրանցումը:

## Հոդված 17 ԱՊՈՐԻՆԻ ՓՈԽԱԴՐՈՒՄ ԾՈՎՈՎ

1. Կողմերը պետք է լավագույնս համագործակցեն կանխելու ապօրինի փոխադրումը ծովով, Ծովի մասին միջազգային օրենքի համաձայն:

2. Կողմը, ունենալով ծանրակշիր փաստարկներ դրոշակով կամ առանց դռա, կամ այլ գրանցման նշաններ ցույց չտվող նավին ապօրինի փոխադրման մեջ կասկածելու համար, կարող է դիմել այլ Կողմերի աջակցությանը նման միջադեպին արձագանքելու նպատակով: Կողմերը, իրենց հնարավորությունների սահմաններում, պարտավոր են իրենց օգնությունը տրամադրել:

3. Կողմը, որը ծանրակշիր փաստարկներ ունի կասկածելու համար ազատ նավարկող նավին, միջազգային օրենքի համաձայն, որն ունի այլ Կողմի դրոշակ կամ այլ գրանցման նշաններ, ծովով ապօրինի փոխադրում կատարելու մեջ, կարող է տեղեկացնել այդ դրոշակի համապատասխան պետությանը՝ գրանցման հաստատումը պահանջելու համար, և հաստատման դեպքում, տվյալ Կողմի թույլտվությունը ստանալ նավի առումով համապատասխան միջոցառումներ ձեռք առնելու նպատակով:

4. Պարբերություն 3 կամ նրաց միջև գործող պայմանագրերին կամ տվյալ Կողմերի միջև կնքված այլ համաձայնագրերին համապատասխան, Կողմը, որին պատկանում է նավը, կարող է ի դեպ թույլ տալ դիմող Կողմին՝

- a) բարձրանալ նավը;
- b) ստուգել նավը;
- c) ապօրինի փոխադրման մասին վկայող փաստարկների առկայության դեպքում, համապատասխան միջոցներ ձեռնարկել նավի, անձնակազմի և բերի նկատմամբ:

5. Սույն Հոդվածին համապատասխան գործելուց հետո, ներգրավված Կողմերը պետք է պատշաճ քայլեր ձեռնարկեն, որպեսզի ապահովեն ծովով և նավով փոխադրվող բերի անվտանգությունը կամ տվյալ պետության կամ այլ շահագրգիռ պետության առևտրային և իրավական շահերի պահտպանությունը:

6. Պետությունը, որին պատկանում է նավը, առաջին պարբերությունում սահմանված իր պարտավորություններին համապատասխան, կարող է իր պայմանները ներկայացնել՝ իր և հայցող Կողմի միջև համատեղ համաձայնության հասնելու համար, ներառյալ նաև պարտականություններին վերաբերող պայմանները:

7. Սույն Հոդվածի 3 և 4 պարբերությունների առումով, Կողմը պետք է արագորեն արձագանքի մյուս կողմի հայցին, որոշելու համար, թե արդյոք նավը իրավունք ունի իր դրոշը կրել, ինչպես նաև պարբերություն երեքում նախատեսված թույլտվությունը տալու համար: Սույն Կոնվենցիայի անդամ լինելու դեպքում, յուրաքանչյուր կողմ պետք է համապատասխան մարմին, կամ ըստ անհրաժեշտության մարմիններ, նշանակի նման հայցերը ստանալու և դրանց արձագանքելու նպատակով: Նման նշանակման մասին Կողմերին տեղեկացնում է Գլխավոր Քարտուղարը, նշանակումից մեկ ամիս ամց:

8. Կողմը, որը սույն հոդվածին համապատասխան որևէ միջոց է ձեռնարկել, պետք է արագորեն այդ մասին տեղեկացնի Պետությանը, որին պատկանում է նավը, և բոլոր այլ շահագրգիռ պետություններին դրանց արդյունքների մասին:

9. Կողմերը կմտածեն երկողմանի կամ տարածաշրջանային համաձայնագրեր կնքելու կամ գործող Հոդվածի դրույթների արդյունավետությունը բարձրացնելու մասին:

10. Սույն հոդվածի պարբերություն 4 նածատեսված գործողությունները պետք է իրականացվեն միայն ռազմական նավերի կամ օդանավերի կողմից կամ այլ նավերի և օդանավերի կողմից, որոնք հեշտությամբ տարբերակվում են, որպես կառավարության կողմից լիազորված և նրա տրամադրության տակ գտնվող միջոցներ:

11. Սույն հոդվածին համապատասխան յուրաքանչյուր գործողություն պետք է պատշաճորեն հաշվարկվի միջամտելու կամ ազդելու ժողովային պետությունների իրավունքների և պարտավորությունների, ինչպես նաև օրենսդրությունը կիրառելու հարցերում, Ծովի մասին միջազգային օրենքի համաձայն:

### *Հոդված 18*

#### **ԱԶԱՏ ԱՌԱՋՐԻ ԳՈՏԻՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏ ՆԱՎԱՀԱՆԳԻՍՏՆԵՐԻ**

1. Կողմերը պետք է միջոցառումներ ձեռնարկեն, որպեսզի ձնշեն Աղուսյակ I և Աղուսյակ II թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և նյութերի ապօրինի շրջանառությունը ազատ գոտիներում և նավահանգիստներում, որոնք պետք է չինեն պակաս խստ, քան իրենց տարածքների այլ մասերում կիրառվողները:

2. Կողմերը պետք է ջանան՝

ա) Մոնիտորինգի ենթարկել մարդկանց և ապրանքների շարժը իրենց ազատ առևտրային գոտիներում և նավահանգիստներում և այդ առումով պետք է լիազորեն համապատասխան մարմիններին, որպեսզի վերջիններս կարողանան խուզակեն բեռները, եկող և դուրս գնացող նավերը, ներառյալ հանգստի և ձկնորսական նավերը, ինչպես նաև օդանավերն ու ավտոմեքնենաները և անհրաժեշտության պարագայում նաև անձնակազմի անդամներին, ուղևորներին և ուղերենները:

բ) Ստեղծեն և շահագործեն ազատ առևտրի գոտի և նավահանգիստներ մտնող կամ դուրս եկող Աղուսյակ I և Աղուսյակ II թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր և նյութեր պարունակող կասկածյալ առաքումների բացահայտման մի համակարգ:

շ) Ազատ առևտրի գոտիներում և նավահանգիստներում ստեղծեն և շահագործեն նավահանգիստների և դոկերի, օդանավակայանների և սահմանային վերահսկման կետերի վեհահսկման մի համակարգ:

### *Հոդված 19*

#### **ՓՈՍՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ**

1. Համաձայն Համընդիանուր Փոստային Միության Կոնվեցիաներով սահմանված պարտավորությունների և իրենց ներքին իրավական համակարգերի հիմնական սկզբունքների՝ Կողմերը պետք է միջոցառումներ ձեռնարկեն, որեպսզի ձնշեն ապօրինի շրջանառության համար փոստի օգտագործումը և պետք է համագործակցեն այդ առումով միմյանց հետ:

2. Սույն Հոդվածի պարբերություն 1 սահամնված միջոցառումները պետք է ներառեն մասնավորապես՝

- ա) Ապօրինի շրջանառության համար փոստի օգտագործման կանխարգելման ու ձնշուման համակարգված գործություն:
- բ) Լիազոր իրավապահ մարմինների կողմից հետաքննչական և ստուգման միջոցառումների ներդնում և շահագործում՝ նախատեսված Աղուսյակ I և Աղուսյակ II թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և նյութերի ապօրին առաջումները բացահայտելու համար:
- շ) Դատական վարությաների համար պահանջվող ապացույցներ ապահովելու համար համապատսխան միջոցառումներ օգտագործելու օրենսդիր միջոցառումներ:

### Հոդված 20

#### ԿՈՂՄԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Գլխավոր քարտուղարի միջոցով Կողմերը պետք է Հանձնաժողովին տրամադրեն իրենց տարածքում Կոնվենցիայի գործելու մասին տեղեկատվություններ, մասնավորապես՝

- ա) Կոնվենցիան ուժի մեջ մտցնելու համար իրապարակված օրենքների և կանոնակարգումների տեքստերը:
- բ) Իրենց իրավասության շրջանակներում կատարված ապօրինի շրջանառության դեպքերի մանրամասները, որոնք ըստ նրանց կարևոր են, որովհետև բացահայտվել են նույն միտումներ, ներգրավածք քանակությունների առումով, նյութեր ձեռք բերման աղբյուրի առումով կամ ներգրավված անձանց կողմից ձեռնարկված միջոցառումների պատճառով:
- շ) Կողմերը պետք է այսպիսի տեղեկատվություն տրամադրեն Հանձնաժողովի կողմից հայցված ժամանակներում և ձևով:

### Հոդված 21

#### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ

Հանձնաժողովը լիազորված է դիտարկել սույն Կոնվենցիայի նպատակներին ուղղված բոլոր հարցերը և մասնավորապես՝

- ա) Համաձայն Հոդված 20 Կողմերի տրամադրած տեղեկատվության հիման վրա Հանձնաժողովը պետք է վերանայի սույն Կոնվենցիայի գործառույթները:
- բ) Հանձնաժողովը կարող է առաջարկություններ և ընդհանուր մեկնաբանություններ ներկայացնել՝ հիմնված Կողմերից ստացված տեղեկատվության քննման վրա:
- շ) Հանձնաժողովը կարող է Տնօրենների խորհրդի ուշադրությանը հրավիրել Տնօրենների խորհրդի ֆունկցիաներին վերաբերող ցանկացած հարցին:
- դ) Հոդված 22 պարբերություն 1 բ) սահմանված Տնօրենների խորհրդի ֆունկցիաներին վերաբերող ցանկացած հարցի առումով Հանձնաժողովը պետք է ձեռնարկի այնպիսի միջոցուառում, որը տեղին է համարում:
- ե) Հոդված 12 սահմանված Հանձնաժողովը կարող է փոփոխել Աղուսյակ I և Աղուսյակ II:
- շ) Հանձնաժողովը կարող է ոչ Կողմերի ուշադրությունը հրավիրել այն որոշումների և առաջարկությունների վրա, որոնք ընդունվել են սույն

Կոնվեցիային համաձայն՝ նպատակ ունենալով դրանց համապատասխան գործողություններ ձեռնարկել:

## Հոդված 22 ՏՆՈՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՂԻ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐՈՅ

1. Առանց ի վնաս Հոդված 21 սահմանված Հանձնաժողովի ֆունկցիաները և առանց ի վնաս 1961թ. Կոնվենցիայով, փոփոխված 1961թ. Կոնվենցիայով և 1971թ. Կոնվենցիայով սահմանված Տնօրենների Խորհրդի և Հանձնաժողովի ֆունկցիաների՝

ա) Եթե, իրեն, Գլխավոր Քարտուղարի կամ Հանձնաժողովի մատչելի տեղեկատվության կամ Միացյալ Ազգերի մարմինների կողմից փոխանցված տեղեկատվության քննման հիման վրա, Տնօրենների Խորհրդող հիմքեր ունի հավատալու, որ իր հրավասություններին վերաբերող սույն Կոնվենցիայի նպատակները չեն բավարարվել, ապա Տնօրենների Խորհրդող կարող է հրավիրել Կողմին կամ Կողմերին, որեպսզի տրամադրեն լրացուցիչ տեղեկություններ:

բ)Հոդվածներ 12, 13 և 16 առումով՝

ի) Սույն Հոդվածի պարբերություն ա) սահմանված գործողություններ ձեռնարկելուց հետո Տնօրենների Խորհրդող, եթե բավարարված է, որ բոլոր անհրաժեշտ գործողությունները ձեռնարկված են, կարող է կոչ անել համապատասխան Կողմին, որպեսզի վերջինս ձեռնարկի ուղղման այնպիսի գործողություններ, որոնք անհրաժեշտ կլինեն Հոդվածներ 12, 13 և 16 դրույթները հրականացնելու համար:

ii) Պարբերություն իii) սահմանված գործողությունների ձեռնարկումից առաջ՝ Տնօրենների Խորհրդող պետք է գաղտնի պահի համապատասխան Կողմի հետ իր հաղորդակցությունները՝ համաձայն նախորդ պարբերության:

iii) Եթե Տնօրենների Խորհրդող գնտում է, որ տվյալ Կողմը չի ձեռնարկել ուղղիչ միջոցառումներ, որոնք առաջարկվել են սույն պարբերության համաձայն, ապա այն կարող է հրավիրել Կողմերի, Խորհրդի և Հանձնաժողովի ուշարդրությունը այդ հարցին: Սույն ենթապարբերությամբ սահմանված Տնօրենների Խորհրդի կողմից հրապարակված ցանկացած հաշվետվություն պետք է պարունակի նաև համապատասխան Կողմերի տեսակետները, եթե վերջիններս դա պահանջում են:

2. Տնօրենների Խորհրդի նիստերին պետք է հրավիրվի ցանկացած կողմ, որի անմիջական շահերին է վերաբերում սույն Հոդվածով նախատեսված քննարկվող հարցը:

3. Ցանկացած պարագայում, եթե սույն Հոդվածով նախատեսված Տնօրենների Խորհրդի որոշումը միաձայն չէ, ապա փոքրամասնության կարծիքը պետք է հաշվի առնվի:

4. Սույն Հոդվածով նախատեսված Տնօրենների Խորհրդի որոշումները պետք է կայացվեն Տնօրենների Խորհրդի ընդհանուր թվի մեծամասնությամբ:

5.Սույն Հոդվածի պարբերություն 1 ա) նախատեսված ֆունկցիաներն իրականացնելիս՝ Տնօրենների Խորհրդող պետք է ապահովի այն ամբողջ տեղեկատվության գաղտնիությունը, որ կարող է հայտնվել իր տրամադրության տակ:

6. Սույն Հոդվածով նախատեսված Տնօրենների Խորհրդի պարտասխանատվությունը չպետք է տարածվի սույն Կոնվեցիրայի դրույթներին համապատասխան Կողմերի միջև կնքված համաձայնագրերի և համաձայնությունների իրականացման վրա:

7. Սույն Հոդվածի դրույթները չպետք է տարածվեն Հոդված 32 դրույթներով նախատեսված Կողմերի միջև ծագած վեճերի վրա:

### *Հոդված 23* ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Տնօրենների Խորհրդությունը պետք է իր աշխատանքի վերաբերյալ հաշվետվություն նախապատրաստի, որը պետք է պարունակի իր տրամադրության տակ եղած տեղեկատվության վերլուծությունը և համապատասխան դեպքերում Կողմերի տրված կամ նրանց կողմից պահանջված բացատրությունները՝ այն դիտարկումների և առաջարկությունների հետ մեկտեղ, որ Տնօրենների Խորհրդությունը կցանկանա անել: Եթե Տնօրենների Խորհրդությունը անհրաժեշտ համարի, ապա կարող է այսպիսի լրացուցիչ հաշվետվություններ ներկայացնել: Հանձնաժողովի, որը կարող է մեկնաբանություններ անել, միջոցով հաշվետվությունները պետք է փոխանցվեն Խորհրդին:

2. Հաշվետվությունները պետք է փոխանցվեն Տնօրենների Խորհրդություն և հետազայում հրատարակվեն Գլխավոր Քարտուղարի միջոցով: Կողմերը պետք է թույլատրեն դրանց անսահմանափակ բաշխումը:

### *Հոդված 24* ԱՎԵԼԻ ԽԻԱՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՐԿՈՒՄԸ, ՔԱՆ ՊԱՀԱՆՁՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՎ

Կողմը կարող է ընդունել վերահսկման ավելի խիստ և կոպիտ միջոցառումներ, քան սահմանված է սույն Կոնվենցիայով, եթե ըստ նրա դա ցանկալի կամ անհրաժեշտ է ապօրինի շրջանառության կանխարգելման կամ ձնշման համար:

### *Հոդված 25* ՆԱԽԿԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԶՃԵՂՈՒՄԸ

Սույն Կոնվենցիայի դրույթները չպետք է շեղվեն 1961թ. Կոնվենցիայով և 1971թ. փոփոխված 1961թ. Կոնվենցիայով նախատեսված Կողմերի իրավունքներից և ստանձնած պարտավորություններից:

### *Հոդված 26* ՄՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն Կոնվենցիան պետք է բաց լինի ստորագրման համար Միացյալ Ազգերի Վիեննայի Գրասենյակում, 1988թ. դեկտեմբերի 20-ից մինչև 1989թ. փետրվարի 28 և դրանից հետո Միացյալ Ազգերի Նյու Յորքի Գրասենյակում մինչև 1989թ. դեկտեմբերի 20՝

- ա) Բոլոր Պետությունների կողմից,
- բ) Միացյալ Ազգերի Նամիբիայի Խորհրդի կողմից ներկայացված Նամիբիայի կողմից,

c) Տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի կազմակերպությունների կողմից, որոնք բավարար կոմպետենցիա ունեն սույն Կոնվենցիայով, սույն Կոնվենցիայով նախատեսված Կողմերի տեղեկանքներով, նախատեսված միջազգային համաձայնագրերի բանակցման, կնքման և կիառման համար: Այս կազմակերպությունների անդամ Պետությունների կամ համապատասխան ազգային ծառայությունների կողմից:

### Հոդված 27

#### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎԱՎԵՐԱՑՈՒՄԸ, ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԿԱՄ ԱԿՏԸ

- Սույն Կոնվենցիան ենթակա է Պետությունների և Միացյալ Ազգերի Նամիբիայի Խորհրդի կողմից ներկայացված Նամիբիայի կողմից վավերացման, ընդունման կամ հաստատման և Հոդված 26 ենթապարբերություն ց) նախատեսված տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի կազմակերպությունների կողմից պաշտոնական հաստատման ակտի: Վավերացման, ընդունման կամ հաստատման և պաշտոնական հաստատման ակտին վերաբերող մեխանիզմները պետք է տրամադրվեն Գլխավոր Քարտուղարին:
- Պաշտոնական հաստատման մեխանիզմներում տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի կազմակերպությունները պետք է հռչակեն սույն Կոնվենցիայով կառավարվող հարցերում սեփական կարողությունները: Այս կազմակերպությունները պետք է սույն Կոնվենցիայով կառավարվող հարցերում սեփական կարողությունների ցանկացած փոփոխության մասին տեղյակ պահեն Գլխավոր Քարտուղարին:

### Հոդված 28

#### ԱՆԴԱՄԱԿՑՈՒՄ

- Սույն Կոնվենցիան ցանկացած Պետության, Միացյալ Ազգերի Նամիբիայի Խորհրդի կողմից ներկայացված Նամիբիայի և Հոդված 26 ենթապարբերություն ց) նախատեսված տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի կազմակերպությունների անդամակցման համար պետք է բաց մնա: Անդամակցումը պետք է կատարվի Գլխավոր Քարտուղարին անդամակցման մեխանիզմների տրամադրման միջոցով:
- Անդամակցման իրենց մեխանիզմներում տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի կազմակերպությունները պետք է նշեն սույն Կոնվենցիայով կառավարվող հարցերում սեփական կարողությունները: Այս կազմակերպությունները պետք է Գլխավոր Քարտուղարին տեղեկացնեն նաև սույն Կոնվենցիայով կառավարվող հարցերում սեփական կարողությունների փոփոխության մասին:

### Հոդված 29

#### ՈՒԺԻ ՄԵԶ ՍՏՆԵԼՈ

- Սույն Կոնվենցիան պետք է ուժի մեջ մտնի վավերացման, ընդունման, հաստատման կամ Պետությանների կամ Միացյալ Ազգերի Նամիբիայի Խորհրդի կողմից ներկայացված Նամիբիայի անդամակցման քսաներրորդ մեխանիզմի Գլխավոր Քարտուղարին տրամադրելուց իննուուն օր հետո:

2. Յուրաքանչյուր Պետության կամ Միացյալ Ազգերի Նամիբիայի Խորհրդի կողմից ներկայացված Նամիբիայի առումով, վավերացման, ընդունման, հաստատման քաներրորդ մեխանիզմի տրամադրելուց հետո սույն Կոնվենցիայի վավերացումը, ընդունումը, հաստատումը կամ անդամակցումը պետք է պետք է ուժի մեջ մտնի վավերացման, ընդունման, հաստատման մեխանիզմի տրամադրումից իննառև օր հետո:

3. Հոդված 26 ենթապարբերություն ց) նախատեսված տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի յուրաքանչյուր կազմակերպության համար, որը պաշտոնական հաստատման ակտ կամ անդամակցման մեխանիզմ է տրամադրում, սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այսպիսի տրամադրումից իննառև օր հետո կամ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրը սույն Հոդվածի պարբերություն և նախատեսված ավելի ուշ օր:

### Հոդված 30 ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈ

1. Ցանկացած պահին գրավոր տեղյակ պահելով Գլխավոր Քարտուղարին՝ Կողմը կարող է չեղյալ հայտարարել սույն Կոնվենցիան:
2. Այսպիսի չեղյալ հայտարարումը տվյալ Կողմի համար պետք է ուժի մեջ մտնի Գլխավոր Քարտուղարի կողմից ծանուցումը ստանալուց մեկ տարի հետո:

### Հոդված 31 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ցանկացած Կողմ կարող է սույն Կոնվենցիայի փոփոխություններ առաջարկել: Այսպիսի փոփոխությունների տեքստը և հիմնավորումները Կողմը պետք է հաղորդի Գլխավոր Քարտուղարին, որը պետք է դրանք փոխանցի այլ Կողմերին և տեսնի, թե արդյոք նրանք ընդունում են այդ փոփոխությունները, թե ոչ: Եթե ոչ մի Կողմ առաջարկությունները ներկայացնելոց քանչյուրս ամսվա ընթացքում չի մերժել դրանք, ապա դրանք պետք է համարվեն ընդունված և համապատասխան Կողմի առումով պետք է համարվեն ուժի մեջ մտած Գլխավորին Քարտուղարին փոփոխման մասին իր համաձայնությունը տալու մասին ծանուցումից իննառև օր հետո:
2. Եթե ոչևէ Կողմ մերժել է առաջարկվող փոփոխությունը, ապա Գլխավոր Քարտուղարը պետք է խորհրդակցի Կողմերի հետ և եթե մեծամասնությունը կամենում է, ապա Կողմերի մեկնաբանությունների հետ մեկտեղ պետք է ներկայցնի այս հարցը խորհրդին, որը կարող է որոշել համաձայն Միացյալ Ազգերի Խարտիայի Հոդված 62 պարբերություն 4 իրավիրել խորհրդակցություն: Այսպիսի խորհրդակցության արդյունքում կայացված ցանկացած փոփոխություն պետք է ներառվի Փոփոխության Արձանագրության մեջ: Այսպիսի արձանագրությամբ պարտադրված համաձայնությունը պահանջվում է հաղորդել Գլխավոր Քարտուղարին:

### Հոդված 32 ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

1. Եթե երկու կամ ավել Կողմերի միջև վեճ է առաջանում, կապված սույն Կոնվենցիայի մեկնաբանության կամ կիրառման հետ, ապա նշված կողմերը պետք է խորհրդակցեն և

փորձեն վեճը լուծել բանակցությունների, հետաքննությունների, միջնորդության, հաշտեցման, արբիտրաժի, տարածաշրջանային մարմինների միջամտության, դատական կարգի կամ այլ իրենց ընտրությամբ այլ խաղաղ միջոցներով:

2. Ցանկացած այսպիսի վեճ, որը չի կարող լուծվել համաձայն սույն Հոդվածի պարբերություն 1, սույն վեճի Պետություն Կողմերից ցանկացածի հայցումով պետք է որշման համար փոխանցվի Արդարադատության Միջազգային Դատարան:

3. Եթե Հոդված 26 ենթապարբերություն c) նախատեսված տարածաշրջանային տնտեսական ինստեգրացիայի մի կազմակերպություն հանդիսանում է սույն Հոդվածի պարբերություն 1 նախատեսված վեճի Կողմը, որը չի կարող լուծվել սույն Հոդվածի պարբերություն 1 սահմանված կարգով, ապա Միացյալ Ազգերի Անդամ Պետության միջոցով այն կարող է խնդրել Խորհրդին, որպեսզի վերջինս խնդրի Արդարադատության Միջազգային Դատարանի խորհրդատվական կարծիքը՝ համաձայն Դատարանի Կանոնադրության Հոդված 65, որի կարծիքը որոշիք կիամարվի:

4. Սույն Կոնվենցիայի ստորագրման, վավերացման, ընդունման կամ հաստատման կամ սույն Կոնվենցիային կամ յուրաքանչյուր տարածաշրջանային տնտեսական ինստեգրացիայի կազմակերպության անդամակցելու պահին յուրաքանչյուր Պետություն կարող է հայտարարել, որ իրեն սույն Հոդվածի պարբերություններ 2 և 3 պարտադրված չի համարում: Այսպիս հայտարարություն կատարած Կողմի հանդեպ մյուս Կողմերը չպետք է պարտադրված լինեն՝ պարբերություններ 2 և 3 առումով:

5. Սույն Հոդվածի պարբերություն 4 սահմանված կարգով հայտարարություն կատարած Կողմը ցանկացած պահին կարող է ետ վեցնել իր հայտարարությունը՝ ծանուցելով Գլխավոր Քարտուղարին:

### Հոդված 33 ԻՐԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐՈՅ

Սույն Կոնվենցիայի Արարերեն, Զիներեն, Անգլերեն, Ֆրանսերեն, Ռուսերեն և Իսպաներեն տեքստերը համահավասար են:

### Հոդված 34 ՊԱՀԱՍՈՒՐԸ

Սույն Կոնվենցիայի Պահանջուն է Գլխավոր Քարտուղարը:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՅՆԻ Կոնվենցիան ստորագրել են ստորև նշված և լիազորված անձինք:

ԿԱՏԱՐՎԱԾ Է ՎԻԵՆՆԱՅՈՒՄ, հազար իննը հարյուր ութանասուն ութ թվականի դեկտեմբերի քսանին: